



1V-0p
Բարձր

ԵՍՍՀԻՐ

Գրականություն
և Արվեստ



ՃԳ. ՏԱՐԻ

ԹԻԻ 4

ԱՊՐԻԼ 1974

Մ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գ.	ԿԱՐԱՊԵՆՑ	Աքալայա
Ս.	ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Ճանապարհ եւ նշմարտութիւն
>	>	Տեսիլ առաջին
Ա.	Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ	Երէկ, մարդ մը մեռաւ՝ հողը բուռնցփն մէջ սեղմած
Ա.	ԳԱՐԱԼԷՔԵԱՆ	Արեւոյին բուրում
>	>	Լուսեան խորհուրդը
>	>	Ես այդ աչքն եմ
Կ.	ՍԱՍՈՆԻ	Հորիզոնէ հորիզոն
Յ.	ՆԱԳՈՒԼԵԱՆ	Անմարմինները
* * *	«Յակրժուքեան նշանաբանով»
Յ.	ՆԱԳՈՒԼԵԱՆ	Սերգէյ Փառանգանով
ՀԵՐՊԸՐԹ ՄԱՐՇԱԼ	Արուեստագէտ մը վտանգի տակ
* * *	Վկայութիւններ «Նաան գոյեր» ժապաւենին մասին
Բ.	ԵՂԻԱՅԵԱՆ	Փոզովրդային հոգեբանութիւնը «Քաջ Նազար» հեֆիաթին մէջ
Լ.	ՄԿՏՏԶԵԱՆ	Ա. Արփինէի «Եւ հաւը սուլեց» ժողովածուն
Ա.	ԱՐՓԻՆԷ	Իմ խօսքը
* * *	«Հասարակ հովուի» տղան հարուստ կտակը
Խ.	ԳԱՇՏԵՆՑ	Իմ աշխատանքը շէյֆափիբան բարգմանութիւնների վրայ
Ի * * * * *	Նշմարներ

10/07

Բարձր



ԱՂՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

Հ.Յ. ՅԱՐԲ. ԹԻԻ 4 Ա Պ Ր Ի Լ 1974 ՊԵՏՐՈՒՄ

3859/480

Յ. ԿԱՐԱԳԵՆՑ

Ա Ք Ա Լ Ա Յ Ա



Մովսէսի տղայ կէտից, կամ Հարաւային Քարոյանայի ծովափ-
 նայ որեւէ գիրքից էլ նայելու լինես, Արամեանը գորշ ու սնյոյց մի ա-
 նապատ է՝ հորիզոնում միանալով երկնքին: Վերից կարծես մի վիթխարի
 կախարիչ են գրել ծովի գլխին: Ամպային կաւահումներ չկան: Երկինքը
 կամ պարզ է, կամ թխալու: Բայց թուխը սպանալից չէ: Հենց այնպէս,
 միապազազ գորշութիւն, որը տառջին իսկ պահից նստում է շնչիդ, ննչում,
 ծանրանում: Մովսէսի տղայ իր պատշգամբից լսելի էր ծովի ոնդադրում
 տնքոցը ինչպէս յաւիտենական երկունքի նստած թիւրաթեւ մի գազան՝ հա-
 նելով, ծծենելով, շտիկելով սպիտակ աւաղի կողք: Վահէ Սարեանը կարեկցեց
 հողին: Նաւ էր ուղում սեւեհի: Նաւ չկար: Գոնէ առաքատաւանաւ: Երբեմն
 միայն ժառանգ ոչոյժի յինակէտից հրթրաշարժ կապոյտ ինքնաթիռներ
 էին գուրս պրծնում, սնահալի սուլոցով պտտում մթնոլորտի շերտերը եւ
 կորում հեռաւոր միջոցում: Իր պատշգամբից ծովափի համայնապատկերը
 անիրական էր: Գունաւոր գովազդ լինէր կարծես: Եկել էր հանգստանալու,

162-2000

10720-93

digitised by A.R.A.R.@

ասկայն երկրաչափական գծերը խոսիք էին պատճառում նրան: Դիմացում կանանչ պարտէզ՝ կէտկիտուած արժանեկներով: Պարտէզի եզրին մի քանի մանուկներ զնգակ էին խաղում: Մի գետտաի աղջիկ ճօճուած էր ճօճանակի վրայ՝ հիւսերը հոտանքին առած: Պարտէզների արանքում կարապառ ճեմ ճուղիներ: Կանանչը ժրանկամից կարում եւ սպիտակն էր սկսում՝ մերուկու համար գորչ կապոյտին: Սպիտակ շերտի վրայ գոյնզգոյն հովանոցների շարք եւ ցաք ու ցրեկ կիսամերկ ժարճիներ: Վազ Սեպտեմբեր էր, յետմիջօրէն ու սակայն արեւը կիղիւ էր: Արդիական, պարզ ու կոկիկ հիւսանոցները խաւաքարաէ սուսիերի պէս եզերել էին ծովը: Ամէն մի մտանաչափ տարածութիւն մշակուած էր: Մարզը զուպել էր բնութիւնը, կիրառականի հետ պարապարկ արհեստականը եւ ստեղծել հանգստաւէա պայմաններ, առանց գիտակցելու, որ այդ աննիւս բռնարարել էր բնութիւնը: Այդ մասածումը հեազհեաէ արտածուէց Մարեանի մէջ՝ դառնալով խուլ տառապանք: Եկել էր ծովափի ամալութեան մէջ զաննելու իր անգորբը: Փոխարէն ծովափը վխտում էր ամէն արտէքի ժարդկանցով: Աւելի քան եոթ հարիւր կիլոմետր ճանապարհ էր կարել հասնելու համար ՄԱՐՔԵԼ ԲԻՆ, Իսկ ՄԱՐՔԵԼ ԲԻՆը նոյնն էր՝ ինչ Ֆիլադելֆիայի իր բնակարանին կից հրապարակը: Տօթը կախուել էր միջոցից: Սպիտակ-գիւղին աննչը նստել էր աշխարհի վրայ: Ոչ մի սերեւ չէր շարժում: Մարեանին թուաց, թէ զլխապայտա է ունենում: Գոյները ժարեցին: Մնաց ծովի գորչ երախը, որն աստիճանարար լայնահունւ եւ սպանում էր կուլ աւլ ցամաքը: Մովեղրեայ լինութիւնները հաւեցին՝ դառնալով արճագոյն շերտ: Ճօճանակի աղջնակը բարձրացաւ վեր, կտրեց հորիզոնը եւ անշարժացաւ երկնքում: Աննիւթացաւ նրա կերպարը, բացի ծամերից, որոնք սակէ շարունակի պէս քարացան նրա մտապայակում: Մարեանը լսեց ներքեւի դալար խոսի հեւքը եւ իր արիերի մէջ զգաց ժարմարէ ցանկապատի բարախումը: Քողեց պատաշամբը, դուռը ամուր փակեց եւ ուժասպառ ընկաւ անկողնու վրայ:

Երբ արթնացաւ, մութ էր: Չլիտէր որտեղ է: Չլինի՝ մեռած եմ կամ գուցէ երազում: Պառկած վիճակում շօշափեց դէմքը եւ արագ ոտքի բարձրացաւ՝ ստուգելու համար իրականութիւնը: Վառեց լոյսերը եւ վերազատաւ իր կեանքի թիւը: Պատուհանից զուրո գիշեր էր: Մոնչում էր ծովը: Հիմա փրփրել էր ծովի սերանը: Մարեանին թուաց, թէ ծովը խոտում է իր հետ: Նա որ միշտ սիրել էր ծովը, ինչո՞ւ է այժմ կասկածով համակուել հանդէպ ծովը: Մովափում ստուերներ կային, որոնք տեղատուութիւնից յետոյ բաներ էին փնտրում աւազի վրայ: Մարեանին մտահոգում էր իր գոյութեան մշտանեւ գիտակցութիւնը: Կարծես ուրիշ գործ չունէր, բացի իր գոյութեան մասին մտածելուց: Մինչ այդ ապրում էր: Ամէն ինչ նախասահմանում էր: Իսկ այժմ այս անիրաւ գոյութիւնը եւ գոյութիւնը բոլոր գոյականների, որոնց սկսել էր տեսնել եւ նրանց մէջ զգալ իր կեանքի անհիթիթութիւնը: Օրինակ պահարանի վրայի իր կաշուէ պայուսակը, որը նախ մի քառակուսի զանգուած էր, որը սակայն վայրկեան առ վայրկեան կերպարանափոխում էր, կենդանանում, շարժում ու շնչում՝ դառնալով անհրեակայնի մի գազան՝ մի պահ ետք, մի այլ տաւրկայնի վերածուելու համար:

Մարեանը հապենկով թողեց իր յարկարաճիւր եւ իջաւ վար: Փողոցում նէճեան լոյսերի փառասան էր: Լոյսերը ծամուցում էին աշխարհի բոլոր յայտնի ամառանոցների հանոյքները: Փողոցը գրեթէ ամալի էր: Նա գիտէր, որ արճակուրդայինները վաղուց սուն են զնայել: Բայց ո՞ւր են մնացել ծովափի յեա մտացած արեւապաշտները: Մովի սաք քամին հարուա-

ծում էր նրա աջ այտը: Երբեմն ծովի տեղոցը մինչև փողոց էր հասնում: Նա ուզում էր ապրել անծանօթ փողոցի օտարութիւնը: Նա միւս սիրել էր օտար վայրերի խորհրդաւորութիւնը: Սակայն այստեղ, Ուլիսանոսի Գողոտայում, անակնկալ ունեւ հար: Մերթ ընդ մերթ աչքի տակով Սարեանը ծովի փրփրադէղ բաշն էր տեսնում: Բազմազոյն ու յարաշարժ լոյսերը արտացոլուել էին թաց մայթերի վրայ: Լոյսերը դաւարում էին, օգտականում՝ դառնալով անփրջանալի մի փայտուղի եւ կամ խօսքները մէկ արած՝ սրընթաց արշաւում էր վրայ: Կանդ առաւ: Իր տեղը ճշգրտորէլու համար մի գլխահիկ վտանգ: Զորս կողմը թեթեւաշունչ ու հրապուրելի շինութիւնների համակարգը էր: Դիմացի բարձրաբերձ շէնքի լուսաւոր վերելակը մինչև աստղերն էր հասնում: Սարեանը ոչ մի հաղորդակցութիւն չզտաւ իր եւ շրջապատի միջև: Պատը մինչև որ սիրով ու աստուպանքով չկատուցուի, չէ կարող տուն դառնալ: Իսկ այս պատերի ետին պատմութիւն չկայ: Ձանձրոյթը համակնց նրան: Առանց տեսնելու նա գիտէր դիմացի անաշարի կատոյցը: Նոյն աննկարագիր ձեւերը: Ամէն ինչ շինուել էր մէկ որուայ մէջ: Ամէն մի աղիւսի վրայ նստել էր ժամանակաւորի թաթը: Վաղը կարելի էր քանդել այս բոլորը եւ նորը շինել: Առանց ցաւի, ասանց ափսոսանքի: Ժամանակաւորի դիտակցութիւնը մեխի պէտ դամուկն նրա սրտում: Ուղեց ընկնել սալաշատակին ու անէանալ: Նա նոյնիսկ զգաց երկրազնդէ դարձը իր առանցքի շուրջ եւ տեսաւ ժամանակի ծերացումը փողոցի ամէն մի անկիւնում: շինուուրց քաղաքները մասամբ ապուէն են: Մարդ կարող է թիկն աւլ պատին եւ ժողովուրդը: Մի կերպ մերձենալ անցեալին: Սակայն ո՞ր անցեալին: Ինքը անցեալ չի ունեցել: Ինքը լուկ եղել է: Եղել է այնքան ժամանակ որքան յիշում է: Իսկ յիշողութիւնը խարուսիկ է: Դա՞ր է ապրել, թէ վաղկեան: Այդ մէկը չէր յիշում: Իր ժողովուրդի սրտում թերեւս ապրէր: Թերեւս ուր տար այլ հայերի ուսին եւ դիմանար: Այդ զէպում ժամանակաւորը, ո՞վ գիտէ, գուցէ թանձրանար ու դառնար ասնելի:

Մի քանի մոլորում ինքնաշարժներ կայան էին փնտաւում: Լուսաւէտ ճաշարաններից ներս կերութեամբ յամբ ծիսակատարութիւն էր տեղի ունենում: Միջոցը յազկցած էր ասպակած ձկնեղէնի կծու հոտով, որը սիրտխառնուք պատճառեց նրան: Սարեանը արագացրեց քայլերը՝ մտապատկերից վանելու համար ձկների հոգեվարքը: Քաղաքամիջի ջրանցքը կտրելուց յետոյ նրա գէժ խոյացան երկաթաձողերի ահաբեւ կազմաներ, վիթխարի գլաններ ու ալյանդակ աշտարակներ, որոնք խելագար կլուսթով դառնում էին ամէն ուզողութեամբ՝ իրենց էլիկարական բիւր ուղեները խրելով դիւրերի կուրճը: Այստեղ բազմութիւն կար: Մեծազոյնի երաժշտութիւն եւ քաղցրեղէնի գաղջ բոյր: Մարդիկ զուարճանում էին նախքան ձմրան լուսթիւնը: Երբ նա անցաւ առիւծների վանդակի մօտով, գէժը մի կողմ դարձրեց՝ չլուտեսնելու համար ծերացած անասունների հլու կամայակատարութիւնները: Այլեւս անակնկալ չկար: Ունեւ այլեւս Սարեանին զարմանք չէր պատճառում: Զգիտէր իր զգայարանների բթացման վերադարձը, թէ ներքին ապրումների աստիճանական քարացման: Գիտէր, որ վաղը պիտի մարեն զուարճութեան զրօսայգու լոյսերը եւ միտաղները պիտի ժանդոտեն, ինչպէս ժանդոտում են ընդարձացած հոգիները: Այլեւս ամէն ինչ անիրական է, անցաւ նրա մաքուր Մակայն Ի՞նչն է իրականը: Քաղաքի հիւսիսային ծայրում մի անպաճճ ճաշարան գտաւ, որի աղօտ լոյսերը հրապուրեցին նրան: Նեղիկ մի միջանցք էր, կապոյտ ներկուած պատերով եւ թարմ սուրճի հոտով: Եղած-չեղածը մի երկար մատուցասեղան էր, որի շուրջ, պարտուող, կրթ

աթուակների վրայ նստածել էին երկու սղամաղը ու մի կին : Ճուլքանի ոտն ու սպասարկուն Մոյ անունով երբեմի մի ձկնորս էր, որի խանձուած, չկէտր զէժըը սրտակարգ շարանառնթիւն ունէր : Կործես յարտան սաղ- իապի մէջ կնէր : Սարեանց ձկնապուր պատուիրնց, բարձկուր ու հոց : Միւս յաճարուրդներ, ըստ երևոյթիւն, շնորարակած թանուրծեր, մեծ կեն- րնացումով կնակի միս էին ուտում : Անկնիծ կինը շարանակ խմում էր : Նրա այտերը պարկերի պէս կախուել էին թանակի վրայ : Ձեր խոտում : Որ- րանն միայն քիչ արթնացածի նման թաներ էր մուտում զթի սակ եւ Նորից խորտուպում էր թմբիրի մէջ : Ձեռք խայկիս Սարեանց միայն ճնրճակ մի խոտու էր անձուած խաւարի վրայ : Միջրում կար շաւարտուած խոտակցու- թեան թնկործեր, որոնք էր ձերկարթեան աղթան անձամեայ գարշից յա- տոյ վերացած կրնց ձիւրը :

— Այլեւս հոյ չծայց : Այտէս որ շարանակուր, մէկ սաղ աւաղը ուխտ արժէքի կը բարձրանայ :
 — Երկէ Նիւ Եւրթից ժարը էր եկել : Ուզում էր ճաշարան գտնել, սնորց կատարած շինել :

— Մի՛ :

— Թանձարանուրդի՛ր :

— Ինչո՞ւ :

— Պարտաւթիւնից ի՞նչ պիտի անեմ :

— Գրած է կը վնցնէիր ու հանդեսս կ'ապրէիր :

— Ի՞նչ մի այլ միտի կար, այդ անգամ գրեթէ հում :

— Ի՞նչ էի խնորի կարկանդակ՝ վրան պապապապ :

— Այլեւս ամուսնաց չէ, այլ քաղաք :

Կինը դուրից բարձրացրեց, ձեռքով փորձեց աչքերին իջած ժաղերը
 Վտայնով ու միջանայ :

— Քանի՞նք սարսաղ յետոյ...
 — Նիմա որտե՞ր են սկսել կատուգութիւրը :
 — Ամէն սնոր : Այտէս շարանակուր՝ Աթալայա կը հասնեն :
 — Մի այլ չիէ : — ասաց Սարեանցը :
 — Ամէն ինչ բործարանում նախապատրաստած է : Մէկ, երկու, երեք, եւ անա հերանցը պատարաստ է :
 — Բայց պատուողը անգայնները չեն : Գրածը միշտ հիւսիս է գնում :
 — Բայց չէ՞ որ գործ է բացում իւրերի համար :
 — Հարուստը էլ աւելի է հարստանում :
 — Հիմա ուրիշ կնիկ է պահում...
 — Աթալայա որ հասնի, նա կը փախկեմ այտուղից :
 — Սնուածքներից յետոյ կը գնի գործը :
 — Այս կարկանդակը զո՞ւ ես կնիցի :
 — Ինչո՞ւ :

— Համեղ է :
 — Մի՛ :

— Ամբողջ երկասարարութիւնս գտնեցի սրիկայի համար...
 — Ժամանակին յենց էլ հոյ ասած պիտի կնիցնեց :
 — Մը դըմանով :
 — Գու գործո՞ւ ես կնիցի :
 — Ոչ, հանգիստի :
 — Մրտե՞ր ես իջնել :

- Ռիվիչէրա :
- Բայց ինչո՞ւ այսքան ուշ :
- Որպէսզի զիչ մարդ լինի :
- Այստեղ միշտ լնցուն է :
- Երկա՞ր պիտի մնաս :
- Ձգիտեմ :
- Մեռնի էլ՝ ապահարզան չեմ տայ . . .
- Դու ճարտարապետ ես :
- Ինչի՞ց իմացար :
- Հենց այնպէս, գուշակեցի :
- Նորից փոթորիկ է ակնկալուում :
- Մինչեւ Հոկտեմբեր քաշելիք ունինք :
- Արդէն օգոզանյան են տուել :
- Բէյբուլից ի՞նչ լուր :
- Մերոնք կրկին պարտուել են :
- . . .

Սարեանք գլուխը հակել էր սեղանին՝ դարեջրի բաժակի դրոյ, ուր պղպղակները միմեանց լափելով գոյացրել էին մի մեծ պղպղակ, խորը՝ ինչպէս կովի աչք: Այդ աչքի մէջ նա տեսնում էր իր սեփական աչքի արտացոլացումը, որը հետզհետէ սուճանալով ու ծաւալուելով յորդեց դուրս, թափուկ սեղանին ու լցրեց ճաշարանը, ինչպէս վիթխարի տարածք ստացած միարջիջ մի արարած: Նա այնքա ուշինչ չէր լսում: Ընկել էր անօդ մի տարածութեան մէջ եւ չէր հասնում յասակին: Հաստափոք ճաշարանը լուսնի պէս պաշ ցուլեր էր արձակում: Ճաշարանատիրոջ սեւ փոքր երբեմն մութ ամպի պէս ծածկում էր լուսինը, ապա յաջորդ պահին երեւում էր նրա անդնդախոր կարմիր բերանը, որի թացուածքից սպտանում էին դեղին-սեւ ատամները: Այնտեղ, ուր սեղանն էր վերջանում, բացուել էր խորխորաւոր: Սարեանք յասակօրէն լսում էր իր արեան շրջանառութիւնը, որը հրտալի կշռոյթով դառնում էր իր մարմնի ուղեծիրում, ինչպէս մուրափը արեղակի շուրջ: Նա կրկին անգամ զգաց արեղակային իր ճամբորդի հանդամանքը: Ձեռքերով ամուր կուշից նստարանին, որպէսզի շթաւալուի անջրպետում: Տեսնեա, քանի՞ անգամ պիտի դառնամ արեղակի շուրջ մինչեւ որ հասնի վախճանը: Միթէ՞ մեր ամբողջ գոյութիւնը պայմանաւորուած չէ՞ այս մշտապէս ճամբորդութիւնից: Մի՞թէ նոյնը չէ կատարում հիւլէի հետ: Դառնում ենք, դառնում, ճեղքուում, այրուում, բազմանում ու ոչնչանում՝ կրկին գոյանալու ու յարտակուելու համար: Եթէ միայն մի պահ մտնար իր գոյութիւնը, կեանքը կարող էր շատ հաճելի լինել:



Կէս դիւրից անց էր, երբ Սարեանք լսեց ծովի կանչը: Այդ այնքան կանչ չէր որքան ողբ, կամ աւելի շուտ՝ մորթուող հարիւրաւոր գոմէշների վերջին հոնգիւնը, օրհասական, հրատապ, ահազնասարսուռ: Գտաչգամի դուռը բացելիս փոթորիկի հետաւոր մի թեւ խելազար ներս խուժեց սենեակ՝ քանդելով ամէն մի խոշընդոտ: Գուշար էր գրտում: Արժաւենիները սպահար կանանց պէս օրօրում էին, երբեմն գլուխները թեքելով մինչեւ գետին: Մա-

րիչ էին ծովկերեայ բոլոր լոյսերը: Խաւարը թանձրամարմին վիշապի պէս քայլ առ քայլ առաջանում էր: Աւազախառն անձրևի քննում էր Սարեանի զէմքը: Ի տես բնութեան խուշ անդունների, նա մոռացել էր իրեն: Թեթեւ ժպտում էր: Ուզում էր կուրծքը առ խաւարին: Ուզում էր ապրել խաւարը: Մոփի բերանից փրփուրէ արծաթագոյն գոտիներ էին գոյանում: Մովը ճգնում էր հասնել ու աւերել ամբարակը: Նա սպասում էր այդ աւերին: Այդ աւերի մէջ նա անհնում էր իր փրկութիւնը, իր ազատագրումը գոյութեան կան ժողովուրդից, որի ճանճները մէջ օր առօր թունաւորում էր իր հոգին: Նա փարել էր իր ինքնամոռացումին, որը բացարձակ խաւարն էր, մայր սկզբնաւորութեան: Նա ուզում էր վերազանալ մօր արգանդը:

Մովափին այնքան էլ աւարկու չէր ծովը: Ալիքները արշաւում էին միմեանց վրայ, շատաշով բախում իրար եւ ապա ուժասպառ գալարում նրա ոտքերին: Գաղ էր ծովի ջուրը: Տաք էր նաեւ Կարտիքեան քամին, որը Ատլանտիանի խորքերը մանկուց յետոյ փոխանակ թեւաթափ լինելու, միաքի փոխել եւ ուղղուել էր ցամաք: Երկար քաղից Սարեանը: Ապահով էր: Մի կողմում աւազաթմբերն էին, իսկ միւս կողմում լեռնացած ծովը: Այլեւ չէր լսում ոչ փոթորիկի ոտնոցը, ոչ էլ ծովի անբոցը: Ընտելացել էր տարերջին՝ ինքն էլ մտքը ասրերգի: Երբեմն ասքի ասկ զգում էր լարծուն շարժումը ծովային կենդանիների եւ զգուանքով նահանջում: Մովը փոխում էր շարունակ՝ իր ընդերքը թափելով դուրս: Ամէն ինչ մահ էր հոտում: Լեզի, մտաւ ու բորբոս: Իսկ բանաստեղծները ծովի երգն են երգում, երբ իրականում, ամենազաման զոյապայքարը ծովում է տեղի ունենում: Յանկարծ մի տասնեակ թեւեր կանչեցին Սարեանին եւ ակնթարթի մէջ ներս քաշեցին նրան զէպի ջրի յասակը: Յաջորդեցին այլ ալիքներ: Ընդունվեալ հոտանքների բախումից խցանի պէս վեր բարձրացաւ նրա մարմինը: Վրայ հասաւ մի այլ ալիք: Մի պահ ետք, նրա մարմինը փռուած էր աւազի վրայ: Ջրի գառնութիւնը նրա բերանից ասարածուկ կոկորդը, ապա աղիքները: Բերանը բացեց ու ախի՞ թքեց: Կարծես նրա ներսում խեցզեպին էր նստել:

Սարեանը կորցրել էր ուղղութիւնը: Զգիտէր զէպի հիւսիս՝ է քարում թէ զէպի հարաւ: Չէր ուզում գիտնալ: Անթափանցելի խաւարը դիտել էր նրան: Խաւարը սփոփում էր նրան: Հասել էր մի կէտի, ուր յնազարձ չէր կարող լինել: Կիանքը դարձել էր միապաղաղ սովորոյթ: Այլեւ ուղին նրան չէր հետաքրքրում: Հիմնարկում գործերը կուտակուել էին: Զուլիկթը դրսևորել էր իր կանացի բոլոր հմայքները եւ այլեւս գազանիք չէր մնացել: Իսկ նիւթական ապահովութեան հասնելուց յետոյ գտել էր, որ աւելի անապահով է, քան երբեւէ: Զանձրոյթը եկել էր քայլ առ քայլ, գաղտագողի, նստելով նրա շնի վրայ: Սկսել էր կասկածել: Կանգնում էր խաղձերուկի անկիւնում եւ չգիտէր ո՛ւր գնալ: Զգում էր դրանի ճնշումը: Իսկ ամենաառակային: Սկսել էր համակերպուել, միանման օրերի մէջ թաղելով իր կիրքերն ու տենչերը: Սարեանն այլեւս չէր ընկալում: Մանրամասնութիւններ չկային: Երևոյթները տպաւորապաշտ պատկերների պէս յաջորդում էին իրար՝ ոչ մի հետք չթողնելով նրա ներաշխարհում: Եւ քանի բթանում էին նրա զգայարանները, այնքան նրա մօտ խորանում էր իրերի ինքնուրոյն գոյութեան դիտակցութիւնը: Մտքը չէր այլեւս, այլ շարունակութիւնն ու կերպարանափոխուած դրոյթը քարի, աւազի ու ամպի: Հիմա նա զգում էր նիւթեղէն աւարկայի մահն ու տարբայութեանը եւ վախենում էր:

Մոփի ալիքները սկսել էին հետապնդել Սարեանին: Ալիքները նրան պատկերանում էին որպէս մի, վաղը ու յովազ, սեւ ու արծաթաբաշ: Եթէ

յնս մնար, ապա պիտի տրորէին նրան, յօշոտէին նրա մարմինը եւ արիւնաթաթախ անդամները նետէին ծովի երախը: Նա տառւմ էր ծովը ու սակայն չէր կարողանում հրաժարուել նրանից: Այնքան պիտի պայքարէր, մինչեւ որ իրենցից մէկն ու մէկը տեղի տար: Նրա վազը տարերային էր: Ընկնում էր, բարձրանում, նորից վազում, շնչասպառ ու խելակորոյս, մի քայլ եւս առաջ անցնելու, տեւելու, գոյատեւելու:

— Այսպիսի խեցեժորթ տեսել ես: Ի հարկէ չես տեսել: Հենց նոր դըտայ: Իսկական խեցեփող: Մի ծանրութիւնը տես: Քսանեթ տարի է, ինչ փնտռում եմ, ամառ ու ձմեռ, եւ վերջապէս այսօր դայայ: Դեռ մի ականջիդ դիր, տես ինչե՛ր պիտի լսես, անցեալի պատմութիւնը ու դեռ ներկայի՛ ու ապագայի՛: Այլեւս ոչ մի հող չունեմ: Ամբողջ օրը խեցեփողը ավանջիս պիտի դնեմ ու զմայլիլի պատմութիւններ պիտի լսեմ: Քսանեթ տարի, կատակ բան չէ: Բայց արժէր որոնումս: Հիմա ինձ շատ երջանիկ եմ զգում: Այս փոթորիկը շատերին չարիք է բերում, իսկ ինձ՝ բարիք: Դու ի՞նչ ես փնտռում:

Սարեանը դժուարութեամբ գլուխը բարձրացրեց, մի պահ զննեց խաւարն ու ասաց:

— Ես ոչինչ չեմ փնտռում:

Իր դիմացը կանգնել էր նեղ մի սպիտակութիւն, որի մայրը դալիս էր հետուններից:

— Հապա ի՞նչ ես անում այստեղ:

— Ոչինչ: Հանդուսանում եմ:

— Բայց ծովը շուտով ամբարտակին կը հասնի:

— Այո, ամբարտակին կը հասնի:

— Կ'ուզե՞ս իմ խեցեփողը լսել:

— Այո:

— Ի՞նչ ես լսում:

— Ոչինչ: Միայն ծովն ու քամին:

— Լա՛ւ լսիր: Ի՞նչ ես լսում: Երամշտութի՛ւն: Հեքիա՞թ:

— Ես միայն ծովն եմ լսում:

— Աթալայայի մասին որեւի բան չլսեցի՞ր:

— Ի՞նչ է Աթալայան:

— Դղեակ է:

— Այդ ինչ տարօրինակ անուն է:

— Իսպաներէն է կամ արաբերէն: Նշանակում է աշտարակ աւազների մէջ:

— Աշտարակ:

— Այո՛, դղեակ, ամբողջ: Ես ի՞նչ դիտեմ:

— Ես այդ չգիտեի:

— Կ'ուզե՞ս զեղ տանեմ Աթալայա:

— Որտե՞ղ է Աթալայան:

— Այս մտակայ բլուրների յետեւում:

— Ինչպէ՞ս է, որ դու գիտես Աթալայայի մասին:

Ձայնը ժտեցաւ Սարեանի ուղե՛քին:

— Ես այնտեղ եմ ապրում:

— Էլ ո՞վ է ապրում Աթալայայում:

— Ոչ ոք: Հիմա ես եմ Աթալայայի տէրը:

— Բայց ծովը:

— Ինչո՞ւ ծովը:

- Մովին ո՞վ պիտի հսկի:
- Ոչ ոք: Մովը իր գլխի տէրն է ու տիրականը:
- Ես չեմ ուզում թողնել ծովը:
- Մովը կը խեղդի քեզ: Մովը այս գիշեր կը խեղդի քեզ: Մովը քեզ պէս շատերին է խեղդել: Ես բազմաթիւ դիակներ եմ հանել ծովից: Ծատ անդուժ է ծովը: Իմ խեցեփոքն ասում է, թէ այս գիշեր մենք աղէտ է սպասում աշխարհին: Արի՛, անծանօթ, արի՛ իմ գոցակը, քանի ուշ չէ՛:
- Ես կը դամ Աթալայա: Միայն թէ՛ ինձ մի բան ասա:
- Ի՞նչ ասեմ:
- Ո՞վ ես դու:
- Այսօր իմ ամէնից երջանիկ օրն է: Այսօր գտել եմ իմ որոնածը:



Միայն բարձրացան ամբարտակը: Յետոյ սկսեց անուպատը: Մըրիկը ծառայեց էր: Աւազի ալիքները մոլեգլին շուրջպար բռնած հարուածում էին անընդհատ՝ հազարուոր ասեղներ ցանկում նրանց կիսամերկ մարմինների վրայ: Պաւարի թանձր պտտը հեղձեց սեղմում էր միջոցը եւ յանկարծ երկնքից վարարած գեռեր էին թափում ցած: Մովը շարունակ ներկայ էր: Երբեմն Սարեանի ոտքի ասկ աւազը բացում եւ սպանում էր կլանել նրան: Ամէն ինչ պատահականութիւն է, անցաւ նրա մտքով, պատահականութիւն եմ ես, փոթորիկը, տիեզերքը: Ամէն ինչ ստեղծուել է պատահականօրէն: Ապիտակազգեստ մարդը, ըստ երեւոյթին, դիտէր: Նրա կերպարը մերթ մօտենում, մերթ կորում էր խաւարի ծոցում: Աւազի ողբը անարկու լինելով հանդերձ սրտանմիկ էր: Որբութիւն կար այդ ճիշէ մէջ: Նրան թւում էր, թէ ընկել է մի անթափանցելի պտուտակի մէջ, որը ո՛չ սկիզբ ունէր, ոչ էլ վախճան: Զտուել էր ամէն ինչ: Մնացել էր ծով, աւազ ու խաւար: Այլեւս չկարողացաւ շարժուել: Նրա ոտքերից մազիչներ էին կախուել: Երեբայ ու երեսն է վայր ընկաւ ու աւազի վրայ: Երբ սթափուեց, նախ դեղին լոյսի մի լեղուակ տեսաւ, ապա թաւ մազերի մէջ կորած մի դէմք, ասեղի պէս ծակոզ բերերով:

- Աթալայա՞, — ասաց Սարեանը:
- Իմ տունը:
- Նրանց միջև պլլվում էր մոմի լոյսը: Մարդը նիհար էր, բարձրահասակ ու հիւծուած: Ապիտակ պատառոտուած արայի մէջ նա մաւրի էր նմանում: Նրա ստուերը օրորում էր սեւ, վիմակերտ պտտի վրայ: Սրահից հնութեան բոյբ էր դալիս: Ամէն անգամ, երբ կորակամար ծանր դունդը ճոխչով բացում էին, դղեակի ընդերքից մարդը հեծեծանքներ էին լսում: Բարձրաբերձ առաստաղից վեր, դրսում, դիշերում, դեւեր էին դոփում: Մըրիկը նստել էր Աթալայայի գլխին: Մարդը լուացել էր Սարեանի ոտքերի վէրքերը, իւզով օծել ու լաթերով փաթաթել: Սեւ սեղանի վրայ կային մի քանի շորացուած ձկներ, կաւէ ջրաման ու մաշուած, երկար մի դանակ:
- Ինչպէ՞ս դուք Աթալայան, — ասաց Սարեանը:
- Աթալայան միշտ եղել է, — պատասխանեց մարդը՝ ականջից չհեռացնելով վարդապոյն, խոշոր խեցեփոքը, — մարդիկ են, որ խոյս են տալիս գղենակից:
- Ինչո՞ւ:

— Առում են, թէ անիծուած է :

— Անիծուած :

— Պատմում են, թէ հաղար եօթ հարիւր չեմ գիտի ո՞ր թուականին, երբ Հուան Բուլիլա Մարթինէզը իսպանական նաւատորմի դուռն անցած զըրօւսեց Ծլորիդայից մինչև Բարոլայնայի արհամերձ արածութիւնները, երկար փնտռութեան յետոյ վերջապէս դուռն ծովահայեաց այս վայրը, ուր իր պապական գղտակի օրինակով վերակառուցեց՝ անուանելով Աթալայա եւ նուիրեց իր կնոջ՝ մարգրիտի Մարիա Մարթինիին : Մարթինէզը ընկաւ Սան Սերաստիանի ծովամարտում : Եօթ ասորի յետոյ, մարգրիտին կախեց իրեն Աթալայայի զանգակառնից :

— Ինչո՞ւ :

— Եօթ ասորի սպանեց ամուսնոյն : Առում են, թէ այնքան յուսահատութիւնը չէր պատճառը, որքան հայրենիքի կարօտը :

— Իսկ ուրիշներ ապրե՞լ են այստեղ :

— Այո, սակայն գոթարտութիւնը միշտ անպակաս է եղել :

— Իսկ զանգակառունը կա՞յ սակաւին :

— Կայ զանգակառունը : Բայց աւելի քան երկու հարիւր ասորի է, ինչ զանգը չի զօղանջի :

Մարդը այնպէս հանդարտ էր խօսում, որ կարծես ասածը մարդարէական պատգամ լինէր : Կարծես Աթալայայի պէս նա էլ միշտ եղել է՝ աւազաթաթախ, ջարտակերտ ու անուրիկ : Մարեանը բարձրացաւ, մօտեցաւ պատին եւ արհարով գրկեց Հինուուրց վէճը, որը սառն էր, կենդանի : Քանի՞ կենանք են զնացել : Մնացել է վէճը : Քարերն էլ ունեն իրենց պատմութիւնը : Մակայն ինչպէ՞ս լսել քարերի պատմութիւնը : Եղունգներով քերեց քարը : Քերուածը խոնացաւ ու դարձաւ արցունք : Դրդուած էր աշխարհը : Քարերը զոդուած էին : Քայլեց սրահի մէկ ծայրից միւսը եւ մտաւ մի միջանցք, ապա մի այլ սենեակ, որը նրան տարաւ մտան ու յարակից յարկաբաժինները : Մարդը մտքը ձեռքին հետեւում էր նրան : Մարեանը գիտէր, որ ամբողջ գլուխը մէկ յարկանի կառօյց է՝ բառակուսի, աւելի քան յիսուն սենեակներով : Կառօյցի մէջտեղում նոյնպէս բառակուսի պարտէզն էր, կենտրոնում՝ զանգակառան աշտարակը : Նա հիանում էր շինարարական պարզ ու արտամարանական գծերի վրայ : Ոչ մի սեթեւեթութիւն : Ոչ մի դրմբէթ : Ամէն քար, ամէն կամար ունէր իր սեփական գոյութիւնը : Արարը իր անպատասխան փիլիսոփայութիւնը տարել էր Եւրոպա, նորարարական ձև ձև առել իր մտորումներին եւ բերել Աթալայայ :

— Դու իմ միակ հիւրն ես : Փոթորեկ չլինէր, քեզ տանիք կը տանէի : Կուսրից աստղերը շատ մօտ են :

— Ինչո՞վ ես ապրում :

— Մովը, ձուկը : Մովը միշտ առատ է ձկներով :

— Մենակ չե՞ս :

— Ոչ : Քսանեօթ ասորի փնտրում էի : Իսկ հիմա, որ զտել եմ, պիտի լսեմ անցեալի պատմութիւնը : Ուզո՞ւմ ես լսել իմ խնցիփողը :

— Այո :

— Ի՞նչ ես լսում :

— Մովի խլչոց :

— Էլ ի՞նչ :

— Էլ ոչինչ :

— Լա՛ւ լսիք :

- Ուրիշ բան չեմ լսում :
- Հեքիաթ, երաժշտութի՛ւն, առասպել՛ը :
- Սպասի՛ր, սպասի՛ր, լսում եմ... :
- Ի՞նչ ես լսում :
- Ձանգի զօղանջ :
- Ձանգի զօղա՞նջ... :

Սարեանը լսում էր զանգի զօղանջ, անկոոյթ, տնողայ, աննպասակ զանգի զօղանջ, հետուից, ժօաից, վերից, քարերի տակից : Մարդը արձանացել էր խնցիկողը կրծքին սկզման : Նրա հայեացքում աւազանդ էր նստել :
 — Ձանգակատո՛ւնը, — ազազակեց նա, — քանդուե՛լ է զանգակատունը :

Այդ պահին, դէպի բակը նայող սենեակի դուռը խախտուեց եւ փոթորիկի հետ միասին աւազի սեւ ալիքը յորդեց ներս : Հանգաւ ժոժը : Նոյնը տեղի ունեցաւ միջանցքի հանդիպակաց կողմում : Մէկ առ մէկ փլուզուեալ էին գուլթիքի երկու թուկերի վրայ գտնուող յարկաբաժինների դռներն ու պատուհանները եւ աւազի թանձր դեմերը յորդում էին ամէնուր : Այնտեղ, ուր կանգնած էին նրանք, պատուուեց առաստաղը ու վիժեց ցած : Մարդը բռնեց Սարեանի ձեռքը եւ առաջ խոյացաւ : Նրանք մաքառում էին աւազի յարձանքների դէմ եւ ինչպէս ստորերկրեայ քարածխահանքում թակարդուած հանքափորներ՝ ճգնում մի պատասօ օդ յափշտակել : Ընդհանուր արհաւիրքի մէջ շարունակ հնչում էր զանգի զօղանջը, այս անգամ առանպասակ : Հասան միջանցքի պտտին : Բացեցին երկաթածույլ դուռը : Պատի միւս կողմում պազ խոնավութիւն էր : Մարդը վառեց ժոժը : Արատուոց անդորր էր տիրում այտանդ : Քարանձաւ լինէր կարծես : Այս ու այն կողմ մզլոտած կահոյքի մնացորդներ, փուկթաթախ ջահեր, կոտորուած, ժանգուտած թրերի ժառեր, ժամոտած զրքերի մէջ : Ամբողջ մի քաղաքակրթութիւն, որը փակ էր, բորբոսնել ու քայքայուել : Ու մի ակնթարթում Սարեանը տեսաւ ժամանակի անյատակ քարոցումը : Ամէն ինչ նային է : Մենք ենք, որ ստորափոխում ենք անընդհատ : Ժամանակը նոյնն է, ինչ որ փարաւոնների ժամանակ : Մարդն է, որ սղրում է իր վաղանցուկ գոյութիւնը : Մո՛մի լոյսի տակ տարուերիւում էին ժարդու դիժազծերը :

- Ի՛նչ այտանդ ազակով ես, — առայ նա՝ զտոնալով դէպի անձաւի խոռոչը, — զեանուշին քեզ ծովափ կը տանի :
- Քեզ չեմ հասկանում, — առայ Սարեանը :
- Ես պիտի գնամ :
- Ո՛ւր :
- Ձանգակատուն : Պիտի լուցնել զանգը : Այլապէս աղէտ է սպասում .

Աթալայային :

- Բայց արդէն աղէտի մէջ է Աթալայան :
- Ի՛նչ լզիտես : Պայիս է մի պահ, երբ մարդ պիտի անի այն, որին սպասել է ամբողջ կեանքում :
- Բայց դա բացարձակ խենթութիւն է :
- Խենթութի՛ւն, խենթութի՛ւն, — երկար, ջղադար ծիծաղեց մարդը, — չգիտեմ դու ո՛վ ես, ի՛նչ ազդից, ո՛ր քաղաքից եւ ո՛ւր ես գնում, բայց մի՞թէ քո ներկայութիւնը Աթալայայում խենթութիւն չէ : Ո՛վ է չափել խենթութեան սահմանը : Ի՛նչ լպիտի՛ գայիր Աթալայա : Ձպիտի՛ գայիր Աթալայա :

— Վաղը կը դադարի փոթորիկը: Վաղը լուսն կը լինի գանգը:

— Վաղը եւ բուրբ վազերը քեզ եմ թողնում: Ես իմ անելիքն ունեմ
այսօր:

Մարդը իր ձեռքի լոյսը յանձնեց Սարեանին: Սարեանը խորը նայեց
նրա աչքերին: Նրա բերբեր փայլում էին ասեղների պէս: Նա մի վերջին ան-
գամ խեցեփողը ականջին տարաւ: Խեցեփողը փայլում էր ժառանգն արեգակի
պէս: Մարդը խեցեփողը գրկած՝ բացեց այգու գուռը եւ կորաւ դիշերի մէջ:
Սարեանը փորձեց հասնել, կասեցնել նրան: Ծանրացան նրա քայլերը: Պար-
ակէջ չկար: Աւազը լինեացել, ծածկել էր արմաւենիների կատարները: Զկար
աշտարակը: Մնացել էր երկաթեայ կմախքը, որտեղից հնչում էր զանգի
աննդահար զողանջը: Ծովի թեւերը հասել էին Աթաւայա: Վերից, ամէն կող-
մից մրրիկը տիզմ էր թափում Սարեանի գլխին: Երբեմն քամին մտնում էր
նրա թեւերի տակ, աւնում, բարձրացնում եւ յանկարծ տաշիզի պէս դէն
նետում: Ի՞նչ պատահեց նրան, մտածում էր Սարեանը, հասա՛ւ զանգակա-
տուն: Այժմ կախուել էր տանիքի մի աղււտից եւ արեւն էր թջում: Դեւերի
վայնասունը քառապատկուց: Խաւարը սանձադերձել էր ցամաքն իր բուրբ
ստառուածները եւ երկինքը եկել ու իր կուտակուած զայրոյթն էր թափում
Աթաւայայի վրայ: Նրան թւում էր, թէ հիմա ո՛ւր որ է, հողմածրրիկը կուշ
կը տայ իրեն, որ աներեւոյթ ժազիւներ դուրս կը կորցնեն իր մարմինը երկ-
րից ու փոխարէն խաւարի պորտից վար կը շարտեն իր բզկատուած միտն ու
սակորը: Ո՛չ, տիեզերքը անսահման չէ, այլ մի այլանդակ ձաղար, որտեղից
շարունակ ցաւ ու աւազ է թափում մարդու վրայ: Նրա ձեռքը մի կարծր
զանգուածի զիպչեց: Ծիծեկոյզ էր: Կառչեց զանգուածից եւ տշխու ուժաւ-
պառ՝ աչքերը փակեց: Ծնդել էր նրա կեանքի պատճառները: Անցեալից ոչ
մի հետք չէր մնացել: Լինե՛լ, միայն լինե՛լ, վայրկեան առ վայրկեան, շտ-
րունակել ու շնչել, թէկուզ վիրաւոր ու արիւնաքամ: Միայն թէ՛ դոյտաե-
ւել: Հեռագհետէ աւազը ծածկում էր նրա մարմինը: Ընչու՞մը թմրի էր պատ-
ճառում նրան: Երկնքից դեզին ու կարմիր օդակներ էին իջնում: Առհաստ-
բակ դեզին էր հորիզոնը: Երկրագնդից արեւ՝ մի ստիւն էր: Արեգակի վրա-
յից որքա՞ն ողորմելի են երեւում մուրակները: Դանդաղաչարժ բզկեզներ:
Այնքա՞ն փոքր են, որ երբեմն չեն երեւում: Ամէնից անշնորհքը երրորդ գըն-
դակն է: Ինչո՞ւ է ստասնում: Տեսնեա, ի՞նչ է պատահել: Արապացրեց քոյ-
լիքը՝ մտապատկերից վանելու համար ձկների հողիվարքը: Գաղաքամիջի
լրանցքը կտրելուց յետոյ, նրա դէմ խոյացան երկաթածողերի ահաթեւ կաղ-
մածներ, վիթխարի գլաններ ու այլանդակ աշտարակներ, որոնք խելագար
կշռոյթով գտանում էին ամէն ուղղութեամբ՝ իրենց էլեկտրական բիւր սը-
լաքները խրելով գիշերի կուրծքը: Այստեղ բազմութիւն կար: Մեծադային
երաժշտութիւն եւ քաղցրեղէնի գաղջ բոյր: Մարդիկ զուարճանում էին նախ-
քան ձմրան լուսութիւնը: Վերցնենք աւազի հատիկները: Նրանցից եւ ոչ մէկը
նման չէ միտին: Այնքան տարբեր են նրանք իրենց կառոյցով, բազալրու-
թեամբ ու ձեւով, որ համեմատութիւն անհնար է: Նրանցից իւրաքանչիւրը
ու՛նի իր սեփական գոյութիւնը, իր լինելութեան սկզբնապատճառը: Եւ յե-
տոյ մ՛յ ստաց, թէ աւազը աւազ է: Աւազը աւազ չէ: Եթէ շատ սպասենք,
նա մի օր կը դառնայ ծաղիկ, կամ ձուկ, կամ ջուր, մողէջ, ապակի, դուռ
կամ աւազ: Իսկ եթէ ուզենայ՝ նաեւ զեփիւտ: Առայժմ ես լոյսի՛ պէտք ու-
նեմ: Երկնութիւնները կարող են սպասել: Համայն մարդկութիւնը կարող է
սպասել: Ես պէտք ունեմ, առաջին հերթին, ջրածինի ու թթւածինի: Ես
ուզում եմ նստել լոյսի մէջ ու լուսաւորուել: Ուզում եմ արգասաւորել լոյսը

եւ արդաստարունել լոյսից: Եւ ուզում եմ մէկ վայրկեան լոյսի մէջ ապրել, որպէսզի իմաստաստութեամբ լինի կեանքս: Եւ այս բոլորը ոչ թէ մշակոյթի կամ հոգեմտաւոր այլ առաքինութիւնների համար, այլ յանուն ինքնազրտակցութեան, որպէսզի երբ վերագառնամ ստազին, կարողանամ նախաաւարաց տեսլ, թէ ես այնտեղ էի, մարդ էի:

••

Սարեանը զժուարու քացեց աշփերը: Մարմինը լողում էր հանելի ջերմի մէջ: Անարեւ արշալոյս էր: Թէեւ անձրեւը մազում էր, սակայն արեւի խոստում կար արեւելքում: Դիմացում, հեռում, սակաւին աչկան էր ծովը, այս անգամ ցուցական, գրեթէ անյոյզ: Փոթորիկը զնացել եւ այժմ իր յանուից քարշ էր առնու իր անջիզ պոչը: Յիւնց Աթալայան, Դարձաւ արեւմուտք: Մասաստանների մուգ մի դոսի եզերել էր աւազէ մի քայտա, որի կենարոնում բարձրացել էր անէւ մի բլուր: Այս ու այն կողմ ընկել էին արձատարիւ ծառեր: Անդորրը նման էր անեղ նախաամարտին յաջորդած անդորրին, երբ սակաւին միում են հրանօթները: Հայեացքը բլուրին՝ քայլից մի որոշ ժամանակ: Որքան մօտենում, այնքան անուիւր արամք էր ստանում բլուրը: Կարծես գերեզման լինէր: Աջ կողմում, աւազաթումքերի վրայ ձիան մի դիակ էր երեւում: Կանգ առաւ: Այլեւս չէր կարողանում առաջանալ: Չէր ուզում վերագառնալ Աթալայա: Արեւը մի շող արձակեց: Բլուրը Թաթախուեց արեւի շողով: Այդ տեսեց մի վայրկեան: Սարեանը վարդազոյն մի ցուլք անտաւ սաքերի տակ: Կապտաւ ու աւազի միջից հանեց մի խուշոր, շնախարհիկ խեցեփող: Դողդոջուն մասներով մաքրեց թաց աւազը եւ կարտսով ու անձկութեամբ խեցեփողը մօտեցրեց աչանջին:

(«Միջնարար – 7» շարքից)

Թ. ԿԱՐԱՊԵՆՆՑ



Ս. Կ Ի Բ Ա Կ Ո Ս Ե Ա Ն

ՃԱՆԱՊԱՐՀ ԵՒ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Քմ բիբերու հորերուն ու հանքերուն ածխազոյն
 Հապարաւոր կուտակուած ոսկորներ կան սուրբերու
 Եւ միջօրէ հոգիներու թանձր արցունքին եռքը տաք...

Հիմա, երկի՛ր,
 Միջերկրական կապտաւուն վէպը կողքիս
 Երբ լող կ'առնեմ արեւու
 Եւ մարմինն իմ ջերմացընել կը փորձեմ,

Դուն, երկի՛ր իմ,
 – յաստուածներու կայտառ կաւ –

Երկնի անտես շրթներէն
 իմ ունկերու անապատի հատիկներուն սառուցեալ
 Ռտնաձայներ արամանդեայ, ռտնաձայներ մեղրաբոյր կը սրակես
 Ու հեռաւոր արեւուդ շարականները բոլոր – ռտնաձայներ յաւերժի –
 Ծնծղաներու, փողերու հետ կը հիւանես, կը զնգզնգաւ արդ նորէն...

Խոնջ է մարմինն իմ ամբողջ:
 Դարերու ջերմը ահա էութիւնն իմ կը ցնցէ՝
 Ու կ'ըլլաս իմ մէջ հեղուկը կախարդ, անհունին բացուող,
 Ու պայն նուաճող, ստրուկըդ ընող անհունն անաւարտ,
 Որովհետեւ դուն կախարդն ես կեանքի, մարգարէն լոյսի եւ անվիճելի
 Դուն ան ես՝

ով իր ուրուականներուն տեսիլքով վայրագ
 սերունդն այս պղտոր հրդեհեց կեանքի հիւթով ու գետով սերմին
 անյատակ,

Դուն ան ես՝
 ով իր վառ զեփիտներուն յուշիկ համբոյրով
 յաւերժաբոյր, սուրբ յասմիկներ ցանեց բիբերու թոթով

Ու հիմա, երկի՛ր,
տաք այս ծովափի կողն ի վեր հանգչած
մարմինն իմ սառոյց քամիներուդ պէս

Կ'ըլլայ

Չիզ կայծքար.

կը շողայ քեզմով,

կը յորդի քեզմով,

Եւ օտար հապար շանթարձակ մրրիկ զունչերու դիմաց՝

կը խօսի քեզմով

կը խօսի լոկ քու

Շանթարզել-մագնիս հատու բառերով...

Ջերմ է մարմինն իմ, հիմա:

Դարերու երթոյ ահա, երկնի անտես ակերէն

Անլար քնարիս անտե՛ս լարերուն լոյս, գինովութիւն,

Հապար եղանակ ու վիշտ կը ցանէ:

Պրոնպեայ անվեջ, ո՛չ, ոսկի-ոսկի՝ ձայներ կը պարեն,
Ընկուզիչ շոգի: Բոյր-բոյր յուշերու, գոյն-գոյն սէրերու սերմեր կը տեղան
Երկնի սպիտակ լոյս ստիւքներէն, իսկ տարաշխարհիկ անզղեր արտորեայ,
Իրենց պողպատեայ շեղք կտուցներով բիբերն իմ յոգնած,
Կեղծ կանթեղներու լոյսն արտացոլող բիբերն իմ խռով
Եւ իմ սէրերուս նման միամիտ լեղուցըս դալուկ
Անվերջ կը կտցեն ու կը բզկտեն:

Հոգ չէ՛: Ցաւն է գեղեցիկ...

Մենք յուշերու փլատակ տաճարներուն ճգնաւոր,
Կամ հեքիաթի մարգերուն մէջ գերընկճուած, թափառական
Ջոյգին նման անբաժան՝

ամրան այս ծանր քայլերուն հետ,

ամրան այս ծանր քայլերուն պէս կը քայլենք

մեր կորուսեալ արքայութեան ունկերը խոպ

քանի մը դար վառ լռութեան

Կարասներուն քացրութեամբը օծելու...

Յոգնութիւնը՝

Անգիտակից երգի մը պէս՝

Կը ցատկոտէ, խարապանեալ կը փորձէ

Ինքն իր դազաղը տանող ստուերը մեր գինովի,

Կորաքամակ մեր կեանքի ստուերը գորշ, անորոշ...

Ոտքե՛ր, դողն այս լռեցուցէք:

Հոգ չէ՛, երկի՛ր, յոգնութիւնը մեզի համար հաւատարիմ շունն է,

Այս մութ աշխարհի մտերիմը մէկ հատիկ, որ մեզի հետ, ճի՛շդ մեզի պէս

Տխուր-տխուր մոխիրներուդ ծալքերն ի վար կը քալէ
 Կոյս նշոյլ մը ջերմութեան
 Յայտնաբերման ի խնդիր:

Ահաւոր է սառնաշունչ
 Արեան գաղթի գիշերներն այս գիշատիչ,
 Տառապագին, տառապերգակ ծառեր ենք մենք իրար կոթնած՝
 Ուղիներուդ շուրջ բոլոր խաչի նման իրարու կոթնած, վիշտն իրարու
 Մրմնջացող
 Խաչ քարերուդ

վարդ քարերուդ

հաց քարերուդ

մարդ քարերուդ

Այգիներուն քարացեալ արցունք-գինին ենք թորեալ...

Լաւ կը յիշեմ, երկիր իմ, թէ օր մը դուն ըսիր ինծի.
 — Պէտք է կրել տառապանքն այս.
 Կամբըջնկէք գետերուս, լեզի, անվերջ տառապանքը բարբարոս...

Երկու անգամ տառապած, աստուածազարմ իմ երկիր
 Օգնէ՛, գէթ դուն տառապանքիդ շղթաները երկարէ,
 Որ տառապանքն իմ լիանայ եւ ակերուդ պէս զուլալ
 Ձայներն ակնիս՝ հոգիիս հետ՝ տողերուն մէջ կարկաչեն:

Ակնիս հոգի իմ երկիր,
 Երկու անգամ, երկու-երկու հապարերկու տառապանքներ,
 Իմաստութեան չիպուխ ծխող աստուածաղէմ, ճերմակավարս նահապետ,
 Նստի՛ր իմ դէմ. նստէ՛ միայն երազի պէս պահ մը թէկուզ
 Եւ արտերուդ՝ իբր խալ՝ տառապանքի մահաբեր բոյսերն ամէն եւ կ'ընեմ՝
 իմ շրթներուն համար նեկտար
 Եւ արտերուդ՝ իբր ծարիր՝ տատանկները կապարաշունչ, կապարահունչ՝
 իմ աչքերէն ծորող երգեր հրափայլ...
 Ու կը քալեմ նոյնիսկ մահուան կրակածայթ մայթերն ի վար,
 Ու կը քալեմ նոյնիսկ կեանքի սառցաշղթայ մայթերն ի վեր՝
 ինչպէս տէրվիչն առատաձեռն՝
 քու պրոնպեայ արեւիդ ծիւ մը շողով
 Քաց մայթերու նկուղներուն մէջ դողացող չոր, ցրտակէպ հոգիներուն
 Խաւարն ամբողջ ցրուելու եւ արեւն իսկ ծիւ մը շողիդ մէջ վտիտ...
 նիհար, փոքրիկ, սեւ կէտի մը կը վերածեմ:

Հիմա, երկիր, տեսիլքներու երկնային
 Հազարագոյն, հազարափերթ հրածաղիկ կայ բիբերուս
 Եւ կան յուշեր, եւ կան փուշեր թէ՛ բունաւոր, թէ կաթնաթոյր...:

Տ Ե Ս Ի Լ Ա Ռ Ա Զ Ի Ն

I

Երկիր, բիրն ես գրութեան
 Ու խղճմտանքը լոյսին.
 Իսկ ես՝ ճամբորդը
 Սիրոյ...

Կեանքը՝ եղեմ խաւարապատ: Վառ լոռիքին առաձգական ակօսներուն սըր-
 տարտիս, ուր ջիղերով ուրուականի մը յիմար —երկուորեակը հոգիիս
 — եւ կաղկանձովն երակներուս՝ վաղուան համար կը հերկեմ արտն
 այս երաշտ, անառիկ՝ անծայրածիր յիշողութեան չափ յամառ:

Կեանքը՝ եղեմ, կեանքը անդէմ՝ խաւարապատ մեծ եղեմ ու եղեմին մէջ այս
 հին... հին լոռիքին բոցկտուն: Կեանքն է եղեմ ու մահատուն խա-
 ւարածածկ՝ ճիչերն ինչպէս սուրբերուն, երզը ինչպէս ծեր ծովուն եւ
 տակաւին՝ ճամբորդութիւն անաւարտ... յար եւ նման, ամէն վայր-
 կեան, մեռնող—ծնող մահուան ծովու ծննդաբեռ քերթուածին՝ ալիք-
 ներու մութ խաղին:

Կեանքն իմ անշուք՝ ապատ, ապա՛տ քանտարկեալ քանտաշխարհին մէջ ապատ,
 ուր խաբկանքի կայանները շողշողուն, ամէն վայրկեան, տէրվիչն
 այս մութ կ'ընդունին ժպիտներով, սրտաբաց, ուր լուսեղէն անթու-
 ցուպեր կը տոճունին կաղն ի կաղ անդունդին մէջ մահատան...

Կեանքն է կրկէս ընդարձակ եւ մենք ստրուկը անոր, շիրմաքարերը շրջուն,
Շիրմաքարեր տխրադալով, որք, միամիտ, մոլորուն...

Երկիր, բիրն ես գթութեան
Ու խղճմտանքը լոյսին,
Սէրը անմար,
Իսկ ե՛ս...
Ստուերը
Տկար:

16 x 2500

Կեանքն է եղեմ ու մահատուն, ու մահատուն, ու մահատուն...
Ու հարսնետուն:

II

Մահատունէն զիս հարսնետուն փոխադրող, այլափոխող ցուպն ես կախարդ,
Մովսէսի ցուպը առոյգ, որ կը ծագի դարերու խաւարն ամբողջ վանե-
լու իմ բիբերուս խոռոչներէն ածխակերտ եւ արիւնն իմ փրկելու նեն-
գութեան բաւ տիղմերէն

Երբ ձկնորսները լոյսի նաւերն իրենց կը կապեն
խաղաղութեան պարաններով,

Երբ ջորիներն իմաստութեամբ բեռնաւոր, լուռ դարերու ա-
նապատին հորիզոնէն կեանքով առի ձայներիկներ գոյնզգոյն կա-
խարդական սուտի անզին սրուակներուն հեղուկներով կ'օծանեն,

Ապա յանկարծ,

յուշիկ-յուշիկ շորորալէն կը համովնան,
դէպի մեր կողմ կ'երկարին

ու բիբերուս պապաթեայ դար շերտերուն ծալքերն ի վար
դժուար-դժուար կը սահին, կը խտանան, կ'ըլլան սերմեր արեւի, ար-
ձաքաձայն երազներու առաքելներ պարզ, բարի...

Այսպէս, այսպէս կոհընծայում-տառապանքի խենթ արարքին հետ աղուոր
կը բարձրանան դարերու լուսնէնդ, երկիր իմ, տեսիլներու սանդուխներ,
Լուսասերմերն արեւուն, երազները բիրեղեայ, մեղեդիները անշուրթ՝
Լինելութեան անծանօթ մակարդակին կը հասնին, կը խշրտան
Ու կը պայթին պապաթն ի դուրս, քառսն ի դուրս,
<է՛յ, ուղիւսրէն, մանկօրէն
Լուսածիլեր Յաւերթի...

19 10 11

III

Դուն քերթողն ես նախանձելի, եպակի,
 Ֆառերէն խոր, ծովերէն իսկ խորախորհուրդ,
 Հին, մշտանոր, կենսապայման, միշտ էական երգիչն անձայն...
 Որ գրելը երբ մոռցաւ՝ դարձաւ յաւէտ յարածադկող մեծ քերթուած արտը ծակի:

.

IV

Ես լուսածիլդ եմ յիմար, որ կը ծլի միշտ այսպէս, ոսկեփետուր, ոսկեթեթեւ, ոսկեշուկ հողաքերթուածը վճիտ, հողաքերթուածն այրեցեալ հողիներուն սրբաշուրթ, յետոյ, յանկարծ կը հագնի վեփիտներու լուսաթոյր պատմուճանները մաքուր ու կը բացուի անհունին մէջ թափառող քերթողներուն մութրակ խորհուրդները որսալու...

Ու կ'որսամ ես համայն երգերն անգերի թիթեռներուն հրեղէն՝ վառքիդ համար, երկի՛ր իմ, որոնց մէջ լուս կ'ապրիմ երգն իմ, կ'այրիմ երգն իմ հողաշէն, ետքը կարմիր՝ վէրքը հողին ու տնքոցը մարդկային նաւաբեկեալ թընճուկին, եւ տակաւին, երկի՛ր իմ, մոխրաբարձառ արտերուդ զիցցականական առիւնին խարոյկը խենթ՝ աղամանդեայ, օ՛, հրաշէկ շնչառութեանդ չափ կարմիր:

Դուն անվերջալոյս սիրոյ պատարագ, ճանապարհ անյաղթ...

Օ՛, Փրոսփերինա,

Մատներդ ահա մերկ հողիս սպիներուն կը սրսկեն հաշիշ ու խունկ,
 Մատներդ ահա, հողիս տգեղ կը ծածկեն գլխանցի պզեստներով ջրդարձակ...

Ըսէ՛, ինչպէ՛ն դուն կ'ընես տերվիշն այս չոր այնքան կրքոտ Ադամ ինչպէս, ինչպէս Աստուած: Ըսէ, ինչպէ՛ս, ի՛նչ խորհուրդներ կը գործադրես՝ վերածելու համար դուն պիս մերթ Ատոնիս ու մերթ Սաֆօ...

Լիացած եմ ես հիմա, հապար ակէ այցելող տեսիլներուդ երանգներով սանձարձակ ու բացակայ հնչիւններուդ պղնձեայ մարտերգներով հրարձակ...

Բոյրերդ ամէն, էութեանս մէջ կը նաւեն եւ արեանս մէջ կը պարեն ծովահարսի պէս քնքուշ՝ անրջական սիրոյ պարերը թաւշեայ, իսկ բիթերէս կու գան դուրս շարականները սիրոյդ...

Փորձեցի, մի՛շտ փորձեցի շարտել քեզ մահուան ծովուն մեջ կիպիչ եւ կամ յանձնել մոռացութեան ովկիանի երախներուն գիշատիչ, բայց դուն եկար, երկի՛ր իմ, ա՛յ առաւել գեղեցիկ, մարգարէի մը նշման՝ իբր սիրոյ ճշմարիտ շնանապարի ճշմարտաձայն...

Դէմքըս եղաւ՝
 դէմքըդ միայն,
 Չայնըս՝ ձայնիդ
 վնգզընգոցը բազմաձայն
 Ու տարիւր վիս, տարիւր հեռու, տարիւր ետ...
 նախակասին ուկեճաճանչ քերմութեան:
 Եւ աշխարհն ամբողջ եղանք դուն ու ես
 Եւ աշխարհի դարձաւ քու շուրջըդ միայն,
 Դուն եղար ակունք մտքի ու խղճի,
 Սիրոյ ու յոյսի, սիրոյ ու յոյսի,
 Արարիչ համեստ, լուսագահակալ,
 Ծառը յաւերժի, հրաշէկ, մեծղի...

Անուասիկ կը դառնամ շրջածիրիդ շուրջ պարող խելօք, բարի արքանեակ
 Բայց դուն ե՛ս կաս, ե՛ս չկաս, Աստուծոյ պէս ինքնաբաւ՝ չկաս ու կա՛ս...

Գիրին ու գիրին միջեւ
 կայ վերջըդ բուրեան,
 Բառին ու բառին միջեւ
 կայ երթըդ միայն
 Եւ ծնունդն այս նոր՝
 Ջարդուվշուր կանթեղներու երփներանգավառում նախադարեան...

Ետիս դարեր — լեռնաշղթայ աղացած —
 Ետիս դարեր — գուրգուրանքի լեռնաշղթայ պողպատէ —
 Առջիս կմախք, մոխիր, վարդ եւ յոյսի խոր անապատներ կան անյոյս,
 Ուր կը մեռնիս — կը ծնիս վերածնման, վերածաղկման համար քու՝
 Որովհետեւ նման ես դուն արարչագործ մեծ ծովուն, որ ամէն օր,
 Ամէն վայրկեան, հապար անգամ, ինքն իր դէմքը կը քանդէ
 Ապա դարձեալ նոյն իր դէմքը կ'այլափոխէ, ու կը դառնայ
 Գունաւորող նո՛ր ակիք...:

Գոյութեանը միակ ապացոյցն էս դուն,
 ապացոյցն էս դուն,
 արարի՛չն էս դուն...

Կանթեղ մըն եմ էս անալթոյ,
 Որ կ'օրօրուի գիշերուան մարգին մէջ մութ, ամենի,
 Ու կը կանչեմ քեզ, դէ՛մք իմ, ու կ'արթննան զոյներն ամէն կանթեղին
 Ու կը կանչեմ քեզ, ձա՛յն իմ, ու կը բացուին յոյներն ամէն կանթեղին:

Հեկեկանք ես մանուկներուն զեփիսներու հետ խաղացող,
 Ինչպէ՛ս կարդամ ես զքեզ,
 Եւ սուրբերու անմատոյց աղօթքներն ես իմաստուն ամպերուն հետ ճամբոր-
 դող,
 Ըսէ՛, քեզ ո՛ր սպասեմ:

Երկի՛ր, քիբն ես գթութեան
 Ու խղճմտանքը լոյսին,
 Իսկ ես՝ սիրոյդ
 Ողետորը
 Միամիտ:

Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ



Ա. Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ

Ե Ր Է Պ,

ՄԱՐԴ ՄԸ ԱԵՈՒՄ

ՀՈՂԸ ԲՈՈՒՆՑՔԻՆ ՄԷՋ ՍԵՂՄԱԾ

Գիտէ, որ պիտի մեռնի այլևս. պահ
մը կը դիտէ շուրջը. պիտի մեռնի. այս՛,
չըթուներն արիւնք խմելով, մութ-կար-
միր բերքունի առջև հեղ մըն ալ տե-
նելով մ'յն պարտքս հարկոցները, զորս
երբեք չկրցաւ նուանել...

— Իրացա՛ւ, — կը մըմոայ ջովի
վիրաւոր գինուորը, — արդեօք ի՛նչ կ'ը-
սեն հիմա մեր հարապանները. կարելի՞
է որ այլևս երբեք չտեսնեմ սիրած կն-
ջըս ճեղքուած շրթուները...

— Որքա՛ն չեմ սուկար հիմա մահէն,
— կը շնչաւս եւ կը սկսիս ձեռքովդ շը-
փել բզկտուած վզիդ երակները...

Աչքիս առջև կու դայ այն քաղաքը,
ուր ապրած էր կեանքը, այլբոս եւ հե-
թանոս օրերը. ազատար խուժանին պի-
մակահիր ասպնազը, խուժանին, որ կը
ապստէր մերկ երակներով, ժանգոտած
ափերով...

— Կր ապստէր ինչի՛, — կը փոփայ
ինքնիրեն, — հայրենիք կը փնտռէինք...
գարբուռ չափ մեր հին հողը կ'ուզէինք
սնդմել մեր վէրքոտած իրաններուն վը-
րայ...

Սղունգներով կը ճանկէ հողը:
— Մըկի գրակեցինք այս հողը, որ
մե՛րն է. երէկ ճնճողակները երգեցին ա-
զատագրման երգերը... երէ՛կ...

Յանկարծ կը ցնցուի. սոսկալի որո-
տումներ կը լեցնեն երկնքին անդրու-

թիւնը. կրակէ ծաղիկներ կը պարեն օ-
դին մէջ. գինուորներուն արեան հեռ կը-
րակը կը խառնուի, կ'ըլլայ անհասնում
կեանք, ս'գ, շնչելի՛ք օդ, թթուածի՛ն.
Տես՛նո՛ք, ահաւոր իրականութիւն մը:

— Ինչպէ՛ս ուրախ պիտի մեռնիմ,
— կ'ըսես եւ սաքի կ'ուզես ելլել, սա-
կայն չես կրնար. վէրքդ խորունկ է,
գինու՛ր, մ'յն վէրքը, որ ահաւոր հեղ-
նանքով մը կտալած է միտերուդ, մ'յն
վէրքը, որուն կը հուսատես, որուն հեռ
ձուլումն ես հիմա, որուն տխրատանջ
կծկումին մէջէն կը տեսնե՛ս ջու հայե-
լի բերքերուդ առանցքէն մոխրամտան եւ
մայլ հարկոցնը, որ խորհրդանոր կը
գտնայ ինքնիր վրայ, ինքնինքը կորսըն-
ցուցած գիւտհարի մը նման, եւ որուն ե-
րախէն...

— Տե՛ս, արեգակը ցատումէն կը
պայթի՛ կարծես, — կը մըմոայ կրկին
թիւմորթ մարտիկը...

— Ի՛նչ կը տեսնես, ըսէ՛, գերեզմա-
նե՛ր, զորս պիտի չնշմարես երբեք, աղ-
ջկայ մը դողացող եւ վախ առի՛նքը,
զոր պիտի չզգաս այլևս մասներուդ
ներքեւ... Ի՛նչ...:

Կը ծոես գլուխդ վճականօրէն...

— Արեւը այրած է հողը. աղա՛յ,
այս հողը արին կը հոսի. աս՛ր, գէթ
բուլէ մը սաբ այդ ափ մը հողը ունեղե-
րուդ ներքեւ եւ հասուցտայ. հիմա կը

Հասկնա՞ս... կը խեղդուի՞ս Հոգին սըր-
տին քակուող վայրագ արոփներէն. ըսէ՛,
զինուո՛ր, այս Հոգը, կրնա՞ս օր մը լեզ-
ւիդ սանիւ, ծծել, ինչպէս պիտի ծը-
ծէիր աղջկայ մը արինոս լորձուքը...
ապրիւ այդ Հոգին արինոսխան սնուն-
դով, շնչէ՛ւ եւ զինովնա՛ւ ամբարտա-
ւան իզմերով, բռնէ՛...
Երբ ծնայ, կարծեցի, թէ զիչիւր է
զեւ. մայրս կ'ըսէր, թէ պէտք չէ երբեք
մենք մեզ սարուկներ կարծենք... սա-
կայն սարածուն անապատներուն մէջ մեր
միտերը կ'այրէին՝ բորբոքած Հայնայնե-
ներու նման. կը քաշէինք լուս, մեր գր-
լուխները կախ՝ յանցաւորներու նման.
կարծես ամշնայինք բանէ մը. սակայն
ինչէ՛ն. ծնունդէ՛ն... ազօթքը մեր փոր-
ւած շրթներուն, եւ մեր նմուշած ափե-
րը միջոցին մէջ, կը քաշէինք պարտա-
տուն եւ խելագարներու նման կը փնտա-
լինք մեզի երկարօրէն գաւաճանող մեռ-
քը...

Օր մը, կտառագութեամբ փչեցի հո-
շիւի մը, որուն մէջէն սեւ-զեղին զէմքս
կը ցլուր ձաթող կանչի մը նման. եւ եր-
կա՛ր չեկեկացի:

— Լու՛՛, — կը գոռար ձայն մը ին-
ծի, — ի՞նչ կը փնտաես. ի՛նչ կը փնտաես
ախարհներու մութ բարբառին մէջէն.
արդարութիւնը զինով է եւ մարդոց ե-
րազները ծալուած, մէկդի՛ գրուած,
իսկ մարդոց բերանները խորտակուած
են տակաւ: Տե՛ս, արշալոյսներն իսկ կը
փերջանան քու բարբառոս նայուածքիդ
Հեւ...
— Կը ցաւի՛մ, — կը պոռայ յան-
կարծ ջովի վերաւոր զինուորը, — կը
դարձնես գլուխդ, սակայն վիզդ ահու-
լիօրէն կը ցաւի... կը սուսայիս, այո՛,
չես կրնար օղնել այս եղբորդ, արգաւա-
տանքով կը դիտես անոր վէրքը... Հիմա
վէրքը վերածուած է հսկայ խայի մը...
խոշո՛ր, ամենի՛ խայի մը... արդեօք...
մէկ մեռքով ա՛նքդ կը շփես. մեռա՞ծ ես
արդեօք, թէ ժմայտու ուղեղդ կը խազայ
իւր վերջին խաղը. կանչ մը կը տարած-
ւի, կը ծաւալի աւերակ եղած կանչ մը,
սակայն քա՛ջ ձայն մը.

— Կրկին անապատին մէջ ենք.
կրկին Հոգը մեր կործանի պիտի իր-
նածք, կրկին պիտի մեռնինք...

Դեւ երկէ կը... կը յիշե՞ս Հիմա,
այն երեսասորդ աղջիկը, զոր մզեցիր
Հեոսուր զիւղին մէջ, եւ որ քեզի կը
սպասէ Հիմա, անձամբեր, ցրուած մա-
զերը ուսին: Մայրդ, որ պատուած մեռ-
քերով ոտով ապուրդ կը պատրաստէր.
Եղբայրդ, որ յանախ կ'օգնէր քեզի դժ-
ւարին գործերուդ մէջ. բարեկամդ, ու-
րուն մտքուած բիրերը երազ եւ ապա-
գայի ունացող յաղթանակներ կ'ապազ-
կէին... կը յիշե՞ս Հիմա, ազա՛յ...

— Պատերազմի պիտի երթանք, —
բոսծ էին եւ Հեոսուած էիր խուճերերու-
րուորը կը քաշէին իրենց զենքերով, մա-
կանները վեր, արծիւներու նման իւր-
բոխ... զուն ալ կանգնած էիր անոնց
մէջտեղը եւ կարծես մէկը կը փնտալէր
անապատ միջոցին անձամբեր Հոլովոյթին
մէջէն... կուտեցաք տանջուած աղէքնե-
րով, այո՛, տառապանքներէ խթանուած,
անվանառ սրտերով, սեօթի, սակայն բո-
սոր երակներով. մեր մասններուն ներքեւ
նզմեցիք ծովածուալ աստանքը. խարտ-
զանեցիք եզծուած գայրոյթը, շտոդացիք,
չուսատապաք. ցաւեցա՛ք սակայն:

Օրերը ինչպէս անցած էին, գի-
տե՞ս...

Ոտքի՞ կ'ուզես ելլել... պատրա՛նք-
անա Հիմա արեւը խարսյկ կը կարծես,
որ Հեոզհեան կը մարի. կը մարի... տ-
հա Հիմա կը վերջանան այս բոլորը.
սհա սիրած աղջիկդ, որ մեռքը կ'երկարէ
քեզի... Ել, ազա՛յ, բռնէ անոր սպիտակ
մեռքէն. շե՞ս տեսներ, քեզի կը կանչէ.
տե՛ս, տաղերը խիճերու վերածուած՝
վրաց կ'իյնան, կը սպաննեն միտերդ. ա-
հա ջարդուած տուն մը, որ կը փլի...
Տե՛ս, ծերունի մայրդ, որ նամբուն մէջ-
տեղը կեցած խաւարին փէշերը կը լիղէ.
Հո՛ն, յաշտուած բերան մը, որ կու գայ
հանդիշու լրթներուդ վրայ. մանուկի
մը կզակը, որ կ'իյնայ թռչելով, շար-
շարուած Հոգը, որ...

Ե՛լ, զինուո՛ր, տես այդեկութքը: Կը
յիշե՞ս այն տարին, երբ ուխտի գացինք-

ծուկի աղօթեցին, Աստուծոյ անունը պոռայինք. խելագարներու նման շարուհ-ցանք քով քովի. երգեր երգեցինք, ձեր սպիտակ քերականները օղին... կը յիշե՛ս քու՛րբը:

— Աստուած իմ, կակաշները ու-տաթափ ինկան, — կ'ըսէ քովի զինուորը ծուկն-ծուկն եղած ճակատար ցցած, — ինչպէ՛ս այնու չնչեմ:

— Առաջաստները հետու են, — կը պոռաս զերազոյն ճիշով, մըրիկի պէս ուժղին:

— Տե՛ս, հետու... հեո՛ցը... ամէն ինչ կ'այրի... կը ժոխրանայ, — կը փըս-փըսայ զինուորը վշտաբեկ:

— Մակոյկը մինակ մնաց, — մայրս իսկ ժօսս չէ:

— Վհուկները կրակ կը ցանեն չորս զին. օղը ժահրացած կը նեխի... մար-դիկ բոլորն ալ կը խեղդուին, կը փախ-չին, կը լլկեն զիրար: Ամբոխը կը փնա-նայ...:

— Վնասակար ամպեր այլանդակ խաղալիքներու նման կը խառնուին իրո-րու... բան մը չեմ տեսներ այլևս:

— Մի՛ հաւատար մօրդ խօսքերուն. պատերազմը կոխ չէ միայն. մենք եղի-րամայր սիտի շունենանք երբեք, — կը պոռաս յուսահատ:

— Չե՛ս լսեր պոռնիկներու քրքիլնե-րը. անոնք երազ չունին երբեք: Տե՛ս, զթութեան քոյրերը մեր վերջերը կը լի-զեն:

— Մի՛ խօսիր, — կը շնջայ մարտի-կը հեւասպառ, — չե՛ս լսեր ազոսանե-րու կանչերը: Խոսքարաբ ժամանակը կը փեցնէ խաւարը:

— Հիմա մեր փողոցին մանուկները զնդիկ կը խաղան... սրբա՛ն ուրախ են:

— Վերմակս կարճ է, — կ'ըսէ գո-ղացող զինուորը, — սրիկա՛յ, զոցէ՛ վը-րաս... ողնայարս կը զողայ... սիրած կինս ասկառ կը փախի իր բովանդակ ասմկութեամբ... չ'ողար վրաս. սահ-մընկած՝ աչքերը խոշոր-խոշոր քացած, կը փախչի... անոր զազլ լորձուցը կը հոսի իր վարդազոյն ծիծերուն մէջէն...

— Գրաւած հողիս վրայ տուն մը չի-նեցի. չե՛ս տեսներ անոր կարմիր փեղ-կերը. ամբողջ տունը կարմիր ծեփուած է... կարծես արիւն քսուած ըլլայ ա-նոր...:

— Մի՛ խօսիր, հանդչէ՛, պառկէ՛ բո-պէ մը:

— Երկինքները կը մաշին. տե՛ս, լու-սինը ծերութիւն կը փսխէ. օրորները ծը-ւարած, կը սպասեն բեղմնաւոր եւ թարմ լոյսի տեսիլքին... Աստուած իմ, որ-քա՛ն կ'ուշանայ մեր գիշերը...:

— Ընկե՛ր, երազիս մէջ տեսայ հաստ շղթայ մը վրէն կախուած... սկիւիէ հաստ շղթայ մը...:



Ամէն մարդու պէս մարդ մըն ես. կը մեռնիս՝ հողը բոունցբիդ մէջ սեղմած. սիրած աղջիկդ քովդ չէ. ո՛չ ալ մայրդ. ո՛չ ալ քահանայ մը. մուկին փարած ես քարի մը կտորին. բերկրանք կայ կար-ծես ամբողջ զէմբիզ վրայ, կարծես զըր-կած ըլլաս համանուհիդ սահուն որո-վայիք...:

— Թշուառակա՛ն, — կ'ըսէ ձայն մը ժօռչող, — հաղարներով խեղճեր, այս-պէ՛ս, ամէն բողէ կը մեռնին:

— Մակոյն հերոս են. անժա՛հ են, — կը շարէ միւսը...:

— Փու՛ն բառեր... խարկանք. ա-նուրդի հանուած ստորին քաղաքականու-թիւն... պարզ զինուորը կը մեռնի, իսկ զմեռնե՛րը...:

— Մեծե՛րն ալ մեռան, կը մեռնին, շա՛մ մեծեր... կը հաւատան, կը մեռ-նին... կը հաւատան պատերազմին, իտէլայի՛ն... հողի՛ն... արիւնի՛ն...:

Գիտէր, որ պիտի մեռնէր այլևս. պահ մը գիտեց շուրջը. պիտի մեռնէր, այո՛, շրթունքին արիւնը խմելով, մութ կարմիր բիրբուրուն սովեւ հեղ մըն ալ տեսնելով ա՛յն պարարտ հորիզոնները, զորս երբեք չկրցաւ նուանել. պիտի մեռնէր ափ մը արիւնոտ հողը բոունցբին սեղմած...:

ԱՐԱՔՍԻ Ն. ՉԱՐԵՈՒՏԵԱՆ

Ա. Գ Ա Ր Ա Լ Է Ք Ե Ա Ն

ԱՐՆԻԱՅԻՆ ԲՈՒՐՈՒՄ

Որքան եեզնանք ու կծու ծաղր,
Ու հիւանդկախ մտքերու բազմակուտակ դիակներ:

Մինչ կ'արանեմ ժամանակի ցաւերուն սպեղանի դնող լուսեղէն
ճանապարհներ:

Օ՛, ես կը լսեմ
խորհուրդները ծաղիկներուն վեհաշուք,
որոնց ետին,
դուն չարութեամբդ մամուկ
կը վարձես աչքերդ գոցել
որ քեզ չտեսնեմ:

Ո՛վ խաբկանք, — կնդրուկը կրկնապատկուած տառապանքներու:

Ոտնաձայնն է քառասորակ ձիւտրին...

Բայց դուն, հոգի՛ս, բաց աչքերդ երազարիք:

Անցորդներ կան՝ անգթօրէն յոյս կ'առեւանգեն
տեղը փռչի սերմանելու...

Մահացած մտքերու, կուտակուած դիակներու **ԲԱՐՆՅՈՒՍՈՅ**

ՀՐՈՒԱՆԴԱՆԷՆ

Անունն անոր արձագանգեց ծաղկի բուրումը արեւային:
Արինս խենթացնող հողը գգացի յայնժամ ստերուս մերկ,
Ու քաղցրացնող մեղրը՝ գարնանային ծաղկի վառ բաժակին...

ԼՈՒՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԳԸ

Գիշերներու սուկեզրուագ երազէն
 Զյագեցած Ոսյուած Բնիւրուդ խորհուրդով՝
 Առաւօտում՝

երկարեցար դուք ինձի...

Սիրտըս՝ սրուակիմ
 արիւն հրակէզ,
 Ինչպէս օրերուս
 անգոցանակ ու անլաբ ժամանակացոյց:

Օրերն ինչո՞ւ
 փոզոցներու ժպիներուն պէս անտարբեր՝
 Այսքան ցուրտ են ու խեղկատակ,
 ճիշդ քեզի պէս, ճիշդ քեզի պէս...

Ունկնդրեցի ես օրերով,
 Երկար ու ցուրտ գիշերներու խառնաշփոք տրոփները,
 Որոնք նման են խենթ տղոց խենթ սրտերու
 կշռութեամբ կարկերուն:

Այսպէս եղաւ.
 Օրերուն հետ հալովուզ՝
 գարձայ ես այ մեծ լռութեան խորհրդանիշ...

ԵՍ ԱՅԴ ԱԶՔՆ ԵՄ

Երկինքին դէմ, երկինքին հետ,
 Ճիւղերէն վար, շիք-շիք գայթակ
 Տերեւները
 Հեղուկ աղապատանքն են տարրերուն:

Կեմսարօրբօ՛ւ ծովափիմ,
 Լապտերներու մշուշապատ լոյսին հետ,
 Ստուերներուս պէս անյարիք
 անոնք լռին
 կ'ընդելուզուին իրարու...

Աչք մը շուար,
 Ոսկեաւագ երակին լոյծ սահմանին,
 Թարթիչներովը կը հիւսէ ուղկանն ահա
 իր անվախճամ լինելութեան:

Ես այդ աչքն եմ արճարիք...

ԱԶՆԻԻ ԳԱՐԱԼԷՔԵԱՆ

Կ. Ս Ա Ս Ո Ւ Ն Ի

ՀՈՐԻԶՈՆԷ ՀՈՐԻԶՈՆ

ժ.

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՐԱԶԱՆՔ

Ճանապարհ կարել անցնելը նպատակի մը հասնելու ձգտումէն կ'առաջանայ: Երբ նպատակը խաւար ամպերուն մէջ աննշմար կը դառնայ, հանապարհները կը փակուին, կամ խաշածուած կը սասնան:

Բալէ՛, եթէ կրնաս: Ու եթէ պիտի քայլ առնես, ո՛ւր է Հորիզոնդ: Հորիզոնները մշուշապատ էին այդ օրերուն:

1918ի Մայիսի առաջին Նօրեակը կ'այրէինք: Որքան ժամանակը Սարգսապատի տարածքին վրայէն կ'անցնէր, ամէն բան որոշ էր, ու վճռական: Հայաստանը մերն էր եւ պիտի ապրէր: Այդ էր մեր իւրաքանչիւր շարժումին, արտաքին քայլերուն եւ հոգեկան փոթորկումներուն նկարագիրը: Բայց երբ երկաթուղիէն վար իջայ Քիֆլիս, պարապութին մը համակեց սիրտս: Լուրեր հասած էին Քիֆլիս, թէ թլքական բանակը մտած է Ալեքսանդրապոլ:

Ուրեմն, մէկ օր առաջ, երբ մեկնեցանք Հին Շիրակի, Հին Գումայրէն (Ալեքսանդրապոլ), այդ Հին Հայրենիքը մերն էր: Մայիս 16ին արդէն թուրքի սեփականութիւնն էր: Ու մենք կը դառնայինք որբ: Մեր մայր Շիրակը չկար...

 մում չօգնականը, այլ որովհետեւ ո՛րչա է ցոյց
 առնելու պատուով արձակագրութիւնը: Բայց զը-
 թեթէ անխաբ բոլոր երկերում թուութեան սերը
 եւ արուեստով պարկու ձգտումը չօգնականի կող-
 մից զբոճարում են առանց այլուստիութեան:
 Թուութիւնը եւ արուեստը — թերեւս արձակագրական
 հակասութիւնն առանձին որմ մէջ, զանի որ չնկ
 արուեստն ինքը սակեղանի է նաեւ թուութեան
 յասկապէս թերթիքը որբարկու ձգտման հե-
 տեանանով: Մանաւանդ այսպէս կուշուան մարդ-
 կային թուութիւնը այնքան հակասական է եւ ինք-
 նամէրթ, որ զա արձակագրութեան սերին շնորհա-
 րապէս միանգամայն անկարելի է, ուստի եւ այդ-
 անի եւս պատշաճ ընտրութիւն է կատարում ար-
 ւեստի արարական մաշի միջոցով, այսինքն՝ ըը-
 նութեան մէջ մի նոր ու աւելի հարազատ թուու-
 թիւն է անդունում:

Եստեանագրութեան, սակեղանի է, որ թուութիւնն
 ու արուեստը նշանակալի անի են բանում Ա. Ար-
 քիմէի երկերում: Թուութիւնը նախ զբարկան եկա-
 րագրութեան նիւթ է: Արձակագրութեան անանց
 այց անի եւ զբարկ է կարագրում, ոչ թէ ի
 սեր զուս նկարագրութեան, այլ ներկայացուող
 միջոցաբով յանկուայ արձակագրման համար:
 Թուութիւնը նաեւ անշուշտակից պարտաւան է առ-
 ապահանքներն ու թէկուզ չնկ պարագան ընա-
 կանն մարդկային համար: Թուութիւնը նաեւ ար-
 բող արտաարտադրութեան արեան է, ներշնչման
 սպրիտը եւ իտրորակից: Այսպէս թէ անպէտ,
 թուութեան սերը Ա. Արքիմէի մաս՝ իրրեւ չնե-
 րակ՝ մոյսուն է. Գուշոյ սկանն միջինը նիւ-
 Ե-րթ, որանց թուութեան կարաւը չի կարող յա-
 կապէս բուսն չիմնել:

Բայց թուութիւնը իր ներթիւ սերին է գտա-
 նում համարադասարան արուեստի միջոցով, մա-
 նաւանց զբարկ աչքում: Եթէ չօգնականներ համար
 թուութիւնը արձակագրութեան է պարզ թուութեան՝
 րացտապէս իրրեւ կենցաղային սպասման ու
 կազմութեան ապարից, արուեստագետ համար
 այն գտնում է անփական բարբարոս կոխ բա-
 զարդասորբ, մշին ու եւ աստար: Թուութիւնը
 զիշինն անշուշտ միանիւսում է արուեստին եւ
 արուեստագետին:

Գրեթէ միամտանակ զբուսն երկու գտաճը-
 ւանքները (սիմ եւ արուեստ), զերկու իրրեւ-
 րանէ) կարգացող կարող է անանի, որ արձա-
 կագրութեան միայն մամանակին զբարկու է նաեւ
 արուեստի զերն ու կուսակութիւնը մարդու
 կենսում զբարկու չարքով, սակեղան որչա վե-
 րագունութեան եւ արուեստից էլ կարելու ու կեն-
 սական այլ անհրաժեշտութիւններ նշարբել: Ընը-
 կու իմըրանմէն մէջ, արեանի, միջակութեան գա-
 զափորից այնքան արտափող եւ զարուեստի
 բարձունքը կարող պղծիքը, չօգնական որչա փու-
 լերից անցնելուց յետոյ, այսպիսի ազօթ է
 մրմնում:

«Ո՞վ ճեր, ո՞վ ճեր, ի՞նչ յուստիպարաբիմ-
 ներ, ի՞նչ դաճարաբիմներ այ որ վիճակուիսն իմնի
 կեանքիս մէջ՝ քո՞ն որ այնքան պաննն իրնց ան-
 մեղութիւնը, ու ետիս՝ իր անբոճարիմը: Ար-
 բանը զարգապէս հերտուսուս խոսքերն են, ի
 նարկէ, բայց չօգնական էլ իր մարդով բամբն ու-
 նի այդ խոսքերի մէջ: Թեւ այդ բազմանքը չի
 ներքում արուեստի սերը, այնուամենայնիւ ցոյց

է առիթ, որ արուեստը թուր դէպքերում անհնար եւ ինքնանպաստակ չէ, այլ պատշաճ իմաստ է ձեռք բերում ժողովուրդը մարդկային առումէ իւր պատանջներին սպասարհելու զնպատակով:

Արդէն իսկ այն պարագան, որ Ա. Արփինէն 1940ից մինչեւ Հիմա Հասարակարգին գրականութեամբ է գրադուր, ցոյց է առնում, թէ նա ինչքան է կապուած արուեստին: Ըստ, աւանդակ, ինքն իրեն Հասարակարգի մասին գրեց թերտը է արժանիքը իրեն: Նա ըստ հուսկան, իր սահմաններում, արուեստակեր եւ արուեստագէտ գրող է, ընթացում է իր սեփական նախագործով եւ հակում չէ ընդամենը արեւ նորմալութեան: Ուստի՝ սկիզբաւորէն զիմարէն եւ ձեռագիր սեղ: Ցարինքի ընթացում, գծուր չէ նշահանել, որ ինքն իր փորձով է յառաջիմել, այլ ոչ թէ արթններէ փորձով կամ նրանց Հայկական սկզբունքներին սեղնորհելով:

ԵՍՆ Եւրոպայի մասին...» Ժողովուրդում, ինչպէս եւ նախորդ «Եւրոպայի կասկածաբարիւնը ժողովուրդում զհակում պատմութեանը Հակահասում են Համապատասխան գրական վարչապետի Հայ կենտրոն արտադրի քննադատներէ վերաբերել: Այդ քննադատները, ի հարկէ, բարձրակի իրական գալու չեն: Նաեւ ուրիշ գրողներ են սեղանագործել գրանց, Բայց ոչ մէկը գրողը, ընդամենը, չէ կարող արեւ ձեռք փոխարինել Ա. Արփինէի գրածին: Հետեւապէս այն իր սեփականութեանը սեղն ունի ժամանակակից Հայ գրական սեղանում:

Ոչ մի առանձին գրող, ինքնին պարզ է, չէ կարող ընդգրկել պատշաճ կենտրոն թուր ուրբաները, ժողովուրդը սփռուած Հայ ժողովուրդի իրականութեան պայմաններում, Հետեւապէս չէ կարող մեծամեծակ ապահովել պատշաճ կենտրոն զնախարհաստական արեւգրութեանը: Մինչդեռ այդպիսի արեւգրութեան կարիք միշտ էլ կայ՝ ժողովուրդը նորմալ եւ գալիք սեղաններէ Համար: Գնախարհաստական իրողը ունի իրականութեանը ընդգրկելու եւ մարմնաւորելու այնպիսի ինքնապատուկ Հետաւորութեանը, որոնցից զուրկ են գրուր իրան միւս սեղանները: Ան թէ ինչու իրենց կերթին մեծ գն ունեն նաեւ գրողները, մանաւանդ, երբ իրենք բերումը սահմանութեւ են եւ նրանց վերահսկում է առանձին միւսամասնակ շտաբի զննել, սեղն մեկերէ մէկ խառնելով Հետեւապէս իրողութեաններէ զանց ուրուպատակները:

Ըստ Համապատշաճ զնախարհաստական արեւգրութեան կարող է սեղանուել թուր՝ որոշ զիմարէն սեղանակ առնալ գրողներէ ինքնորով, որանցից մէկն է Ա. Արփինէն:

Ներկայացուող ժողովուրդի կապակցութեամբ, արեւ չենուել Հետեւապէս:

Ժողովուրդն, ի հարկէ, ուղղակի իմաստով գրական նախագործար է, քանի որ սեփական է նախորդ ասանակներէ ընթացում գրուած երկեր եւ պատկերացում է առնալ Հեղինակի սեղան սարգով գրական նախագործի մասին: Բայց զո միայն նախագործար չէ, այլ նաեւ ներկայի վիճակում եւ ապագայի նախագործար: Գրողը է մասնակ, որ Ա. Արփինէն լարուած կամ է գրել, ըստ իր Հետաւորութեաններէ եւ այնպիսու սեղ: Ուրեմն, ժողովուրդն միւսամասնակ նախագործին նախարուտ է, որի նախընթաց կարող ենք սեղանակել, թէ այսօր ուր է նաեւ Հեղինակը եւ ինչ ուղղութեամբ է լարուում նրա գրիչը:

Թէն ժողովուրդում աւելի մեծ թիւ են կազմում վաղ շրջանի երկերը, աւելի են ընդունում նաեւ նորերը: Ըստ ուրուտ եւ ընդունել մանաւանդ գրել միւսին երկու պատմութեանը: Մէկն է, սեղանակում կենտրոն արտադրի արտադրում են պատմական եւ ընդամենը բարիք, Հետեւապէս ընդամենը: Բայց առնուել յառաջակարգ վերջին՝ ընթաց առնուել արեւ չենուել եւ ընդունել: Ան...» կարծես են: ընթաց առնուել արեւ չենուել երկու, արեւգրութեանը սեղանութեամբ մի սարգով մանաւանդ է պատկերում: Թէ՛ կասուցուածքով եւ թէ՛ բովանդակութեամբ այդ պատմութեանը սարգովակ է եւ, ըստ իս, արեւնի պատգրիք մանուել, որպէս չէ միշտ եւ թուրին ինչեղներ, թէ կենտրոն ինչ արեւներում է Հոգեբանական իրող սեղանութեամբ արեւակից սեղաններէ միւս եւ սեղաններէն արեւ է այդ իրողը կենտրոն չէլ թէ շատ յուսուել երաշխեղը: Անտեմաս շատ աւելի լայն շրջանի մէկ է գրուած ընթաց իսկ, Սեղան...» պատմութեանը, որը միւսամասնակ սեղան է պատմութեամբ ու զապագայիներով: Այնտեղ նայելու ցոյց են արուած կեցութեան իրական պայմաններն ու մասնակներէ, նայելու սեղան փոփոխուել եւս որոնելու երկերը՝ Համարում եւ ինքնապատգրուող լարուածութեան շրջանակում: Գրողը իր կողմից այդպիսի միայն

կորս է տնկ, մայսոնը հասարակարգին մը ստանդ խուերի գործն է:

Մինչև հիմա եւ շահայի մաստորագին սըր-
ւազնէ, թէ զնւ Յաւը աւլից...» Ժողովուած
մէջ զնաեզուած երկերը ինչպիսի ընդհանուր հիւ-
թեր են արծարծուած, աշխարհագրական ինչպիսի
միջավայր են ընդգրկուած, հնաեզի իրականու-
թիւնը ինչպիսի տեսանկիւնով են ընկալուած եւ,
սահասարակ, ինչով կորսն են նպատակ հանդիս-
նուէ հայ ասարսափուս հնաեզի զեզարուստական
ասրիզլու թիւն մշակելու սազարկուած:

Բայց գրողի աշխատանքը հանուելու եւ զը-
նուստուելու համար շուտուած նիւթերի աւելի
կամ պակաս սպորիչ թուարկուելը գործի կնն է
միայն, աթի էլ ոչ միշտ եւ ոչ սահպոյման եական:
Չորսը գրող է՝ առուսելու ընտրած նիւթը մա-
սուցելու ինքուարձիկ կանակով եւ զեզարուս-
տական մշակոյթի մակարդակով: Այգոյիս մ են
գարչուած միւսնայն նիւթը ներկայացնելու սար-
բեր նմարտութիւններն ու տեսանկիւնները:
Այգոյն է թէ բանասեղանութեան, թէ թասե-
րագրութեան եւ թէ արձակագրութեան մէջ:

Չորսը սակով՝ սոփոթորս պակերացնուած
ենք գրողի խոսքի սոփոզութիւնը, այլ խոսքի
զըսուարման բնային ու կանոնակները, ոնք, լե-
զուն, եւայն: Ա. Արփինէն արձակագրուած է,
եւ, ընտանաբար, նրա խոսքը բխուած է արձակ
զրականութեան տանդական պահանջներէ, նկա-
րագրական է իր բնայթով: Եւայնիկ վաղ շրջա-
նի երկերուած թուական զգալի քնարական զե-
զումները մնում են նկարագրական խոսքի սու-
մաններու: Հեղինակի լեզուն երկը այն է, ինչ
որ պէտք է լինի՝ կանոնաւոր, մշակուած, շար-
մուն, ստանդ խնայումներէ, թափանցիկ եւ աճ-
կանակաւ: Բուսեր սրտնելու եւ ցուցադրելու սլ
մի արձնաստական ու սեթեւեթ միտում լի նկատ-
ուած: Բնական յասակութիւնը երկուած է սակ-
նուրեք:

Վերջին պարագան ստուելու եւ ուշադրու է,
որովհետեւ Ա. Արփինէն նմուելու եւ մասովն կազ-
մարտուել է մի աշխարհի միջավայրուած, սրտեզ,
ինչպէս յայտնի է, երկար ժամանակ թուսերը
կենցաղուած եւ զրական երկերուած խնայողաբար
զորեանելու սոփոթութիւն լի կնկն, Հանրայայտ
բանակալութեան պայմաններու, ինչպէս միշտ
է պատահում նման պարագաներու, մարդկային

եւանդի մեծ մասը, երբ մասուր ու հանրային
սազարկներու զորեանելու հնարաւորութիւ-
նը ըստ անմայի տանտանակով էր, յասկացուել
է գիտուարակալ թաստանեղութեան եւ զարուս-
զի տանդակ արտայայտութիւններէ մշակման,
այսինքն՝ թասերի արձնային հաստատութեան
ինքուարձաբար փոխարինելու հաստատութիւնը: Ա-
ւելի եւ որչ զեզարուած թասեր իրենք փոխ-
րինել են հնաեզի իրական տանտաններին (զգա-
ցումներին, մաթերին, գործերին) եւ ինքուարձ
ու ինքուարձ իրագութիւն զարմել, գրանով իսկ եր-
բուն նայնով շփութեան տանդակով արձնան-
րի նախարակութեան մէջ

Ա. Արփինէն խոսքի մէջ այլ երկուայթի նե-
սուար նման սեղան լիայ, նրանու ներկայաց-
ուող թասերէրը, իրեն կանան, լիովն համա-
պատասխանուած են արտայայտուած մաթերի ցա-
նակին եւ նրան այս կամ այն մեւով զերագանե-
լու միտում լին ցուցադրուած: Դա թիւսու կա-
րելի լինել մի պահ ցուցադրել ընդհանրակա
տաներիկայն գրողներին յասակ յասակ լեզու-
սըստանուութեան տղանութեան, բայց Ա. Ար-
փինէն նիւտականուած նայն սեղան էր գրում սա-
կանին ՅԱՍ Թուից է վեր, երբ գնու, կորեւն,
Ամերիկա լեր տեսել: Եւանակում է՝ այլ վնիս
լեզուն եւ զրական սնք խորթով սնտանական է:
Այս պարագան է մէջէ այլու լեզուսեց, սրովհե-
տա՝ ինչպէս ցայտուն է եւ սեղանայի էր սն-
տեսել:

զնւ Յաւը աւլից...» — Ժողովուածի պատ-
մըսանքներէ մեկի վերանայի է ու թիւսու էլ
ինչ որ շափով խորհրդանշական, հակասարա-
կան երկերեզման ու սեղանան իրագութիւնը
նշելու համար, Բայց Ա. Արփինէն զրականութեան
մէջ զազարական երկերեզման ու սեղանուած
լիայ: Այն միտանական սոփոզութիւն է եւ թա-
լար մաստանկներէ հայ զրականութեան իրա-
տանակ տղաներից ու բազկացուցել մասերից մե-
կը, որը, պէտք է կարծել, լին կորուզ կողմի մէջ
ժամանակի, սլ էլ ասարանութեան ցմայնեղը:
Ինքն իրեն հաստատիւ մնալու մարդկային ու
զրական նախանմանիցութիւնը թուական շուտ-
փնի արդիւնք է սուելու եւ հրագրակի վրայ այս
սոր մեկը սեղանը զրական վկայութեան երկու
ներկայանուի հասարներ:


Լ. ՄԿՐՏՅՅԱՆ



Ա. ԱՐՓԻՆԷ

ԳՐԱԿԱՆ ԻՐԱՊԵՐԱԿԱՅԻՆ ՁԵՌՆԵՐԿ

ՆՈՒՐՈՒԱԾ
ԳՐԱԳՐՏՈՒՄԻ
Ա. ԱՐՓԻՆԷ
ԳՐԱԿԱՆ ԿԱՏԱԿՆԻ



ԵՍՍՐ ԶԵՆՈՒԹՅԱՆ
ԵՒՆԱԿԱՆ ԳՐԱԳՐՏՈՒՄԻ
ԳՐԱԿԱՆ ԿԱՏԱԿՆԻ

ԳՐԱԳՐՏՈՒՄԻ ԳՐՈՇԵ ԿԵ ԿԵՐԱՊՈՇԵՆ

ԿՐԻՄ ԻՆՅԱԿԻՉ
ՅԵՐԿՈՒՄ ԿՐԻՄԻՆԵՑ
ԵՆ ԼՈՒՍԻԿ




ԳՏԻՎՈՒՄԻ ԿԱՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ



ՄԵՐՏ 31, 1974, ԵՒՆԱԿԱՆ
ԿՐԻՄԻ ԺԵՍԵ 3:30, Կ.Կ.



NEW YORK HILTON HOTEL
38th ST & 6th AVE. NEW YORK, N.Y.



Ամբողջացնելու համար վերի պատկերով հազորդուած գրական լուրը՝ յիշենք անունները Զուարթ Պալբենեանի, Յարութիւն Մարտիանի եւ Շաֆէ Նահայեանեանի, որոնք ընթերցումներով, երգով ու դաշնակով յաջորդաբար բերած են իրենց մասնակցութիւնը Ա. Արփինէի գրականութեան նստիւած երեկոյթին:

Այս ձեռնարկով՝ գործ մը եւս կատարած եղան Մշակութայինի տղաքը: Արգա՛ր գործ մը:

Յաջորդ էջերուն կու տանք այդ առիթով արտասանած Ա. Արփինէի խօսքին հիմնական մասերը:

Ի Մ Խ Յ Ս Ք Ը

Դժուար է ինձի նման երեսույն խորշոզ ու խրտուզ անձի մը համար նստիլ ու լսել իր զրչին, իր պորձերուն ժառին:

Շարաքներ առաջ, երեկոյ մը, Մշակութային Միութեան մեր տղոցմէ մէկը հեռաձայնեց ու յայտնեց, թէ Երասխան էին գրականութեան նըւերուած հրատարակչին ձեռնարկ մը: Ու տուաւ թուականը: Ինչպէս միշտ՝ նման պարագաներու՝ սարսափ դրացի: Սնդրեցի ու ջանացի համոզել, որ պէտքի ետ կենային, բայց ան մնաց անդրդուելի: Վեզեա կամ չուզես, զաս կամ չզաս՝ մենք որոշած ենք, եղաւ պատասխանը:

Պարտուած էի:

Գրելը, ինձի համար — կ'ենթադրեմ բոլոր գրողներուն համար — ներքին մղում մը, պահանջ մըն է եղած, որուն պէտք է հնազանդիլ, այլապէս, պիտի առաւազեցնէր: Պատճառներդ պատճառու՝ էութեանդ մէջ խմորուող, քեզ անհանդուարեանք տարբեր արտայայտութեան ձեւ կը փնտռեն, լոյս աշխարհ կը ձգտին: Ապրումներ, մտքեր, ազաւորութիւններ ու պատկերներ գրողի պարագային՝ բռնկուելու կը փորձուին: Կենսոյ, արտաքին աշխարհը, ներաշխարհիդ քովէն անցած՝ կ'արտացոլայ թուղթին վրայ:

Մեր գրականութեան նպատակ մը բերած բլլալու յաւակնութիւնը չեմ ունեցած երբեք, եւ չունիմ: Ինչպէս ըսի, գրելը վերցուցած եմ ներքին մղումի մը, ներքին պահանջի մը գոհացում տալու համար. բան մը ըսելու, ճշմարտութիւն մը տալու, ներքին թելադրանքով: Ու միշտ ջանացած եմ տալ զանգուածներուն մատչելի ձեւով մը, ու այնպէս՝ ինչպէս ե'ս եմ տեսած, է'ս եմ դրացած, առանց լոյսարի, առանց առեղծուածային դարձուածքներու, առանց արեւաստականութեան, զոր չեմ սիրեր երբեք:

Ու եղած եմ միշտ զժգոհ տուածէս: Միշտ զգացած, թէ լաւագոյնս չէ, ինչ որ կու տամ ու տառապած այն գիտակցութենէն, որ ժամանակի պակասն ու պայմաններս զաւանձանած են ինձի:

Ստեղծագործելու պահանջ դարձած մղումը, որ կը բխի խառնուածքէս՝ կը պարտիմ անշուշտ ծնողքիս եւ, ուրեմն, արժասններու, իմ ցեղիս: Մէջս ՂԱՅՆ է, որ ուժ է դարձած, զիս ներշնչած, ձեռքս առաջնորդած ու գրութիւններու շունչ տուած: Եւ եթէ երբեք, կը կրկնեմ, եթէ երբեք իմ գրական համետ վաստակեալ եղած է զոյգն նպատակ մը մեր հայ դպրութեան՝ զայն ուրեմն ամբողջութեամբ կը պարտիմ իմ ցեղիս:

Բայց ինչպէս ըսի, եղած եմ միշտ զժգոհ տուածէս, որովհետեւ կը հաւատամ կատարելագոյնին, բացառապէս լսելին, բացառիկ արժէքին:

Թերեւս շատեր զարժանան, երբ բան, թէ ես բմբոստ մըն եմ նաեւ հոգիով ու խառնուածքով: Օրէնքներու, կանոններու հետեւող մը չեմ, գրելչս կը հետեւի ներքին մղումներու միայն: Չեմ սիրեր անբնականն ու արտառոցը, չունիմ նաեւ արդիական հակումներ: Նորածնութիւններու սիրահար մը չեմ եղած երբեք, որոնց առջեւ խոնարհողներ, կը կարծեմ, թէ շատ ունինք ներկայիս: Ես չեմ հետեւիր նոր ուղղութիւններուն, նոր հոսանքներուն: Կու տամ՝ ինչ որ կը զգամ ու կը տեսնեմ, կարելի եղածին շփ պարզ, յստակ, բնական ու ապրուած բլլալու պատրանք տալու ջանքով ու հայու շունչով:

Հաւանաբար ըսի բաներ, զորս պէտք չէր ըսելի, որոնք թերեւս քիչ մը խորթ կը հնչեն: Թերեւս ըսի այս բոլորը, որովհետեւ աշխարհ փոխուեր է

— սրտերագմաներու ստեղծած շարքներուն հետեանքը — փոխուեր է կեանքը, փոխուեր է նաև արուեստի բարոնումը: Արեւմուտքի գրականութեան մէջ արտաուտցն ու անհասկնալին արժէք են դարձած ու վարակած նաև մեր գրողներէն ոմանք:

Տարիներ առաջ, բարեկամուհի մը, հայերէն թերթէ մը կտրած ու ինծի կը դրկած հռչակաւոր նկարիչ Փիքասոյի խոստովանութիւնը Փարիզի «Լը Մոնտը» խմբագրին: Ես հիացում ունիմ մեծատաղանդ նկարիչին բարձրակարգ շրջաններու գործերուն հանդէպ, բայց չեմ տիրեր, չեմ հասկընար ու չեմ գնահատեր իր արդիական գործերը: Փիքասո, «կենարկելով արդի արուեստի երկրպագուներուն» բառն է:

«Ես, քիւպիզմէն աղիւն, զլիւս անցած բոլոր այլանդակ ու անիթիք-միջոցներով քանցի գոհացնել այս կարգի արուեստագէտներն ու բնագրանները, եւ տեսայ, թէ անոնք ալ, որքան որ բան մը կըսան հասկնալ իմ անեղծուածային գործերէս, գմայլեցան գծածնելուս վրայ: Այս տեսակ խոզերով, խառնիճազանց գիծելով, անիմաստ նկարներով դարձայ հռչակաւոր մէկը՝ Մոնեթական ժամանակի մը մէջ: Այսօր, ինչպէս գիտէք, ես նշանաւոր եմ եւ հարուստ: Բայց երբ միմակ մնամ, չեմ յաւակնիր, թէ ես մեծ նկարիչ մըն եմ անգեալ դարերու արուեստագէտներուն նման: Ես պարզապէս ժողովուրդին քիթին խնդացող վարպետ մըն եմ. որ գիտցաւ օգուտը իր ժամանակի սնանկութեանը»:

«Շատ դարն է այս խոստովանութիւնս, նոյնիսկ կարծուածէն շատ անկի. բայց գոնէ արժանիք մը ունի, անկեղծ է»:

Անուատիկ յարգանքի արժանի մեծ արուեստագէտ մը, որ քաջութիւնը ունեցած է այդ խոստովանութիւնը ընելու:

Նորածնութիւնները կու գան ու կ'անցնին: Տեսական արժէք ունեցող գործերն են միայն, որ կը սուկան, կը մնան: Թաւաղող ժամանակի բնութային շատ բնական է, որ փոխուին ճաշակները ու կը փոխուին, պէ՛տք է որ փոխուին: Ներքին չէ տեղաշարժը: Կը հաւատամ տեսական փոփոխութիւն, կարեւոր կը նկատեմ նոր աւելում, նոր աւելում, նոր երանգներով հինը թարմացնելու ձիգը: Կը կարծեմ, թէ հայ գրողը պէտք է հետոս մնայ սակայն անհեթիւ Նորածնութիւններէն ու հետեւի իրեն վիճակուած, իր արիւնէն բխած լուրջ առաքելութեան:

Դարեր ամբողջ անսանձ փոթորիկներէ, հուրէ ու սուրէ անցած մեր ժողովուրդը իր բովանդակ էութեամբ փարած մնաց իր մշակոյթին ու անով գոյատևեց: Մեր գրականութիւնը պէտք է տայ մեր ժողովուրդին կեանքը, մեր ժողովուրդին արցունքը, ժպիտը, ձգտումները, երազները, ուր որ ալ ըլլայ ան: Ամէնէն աւելի հայ հողին է, որ պէտք է հետաքրքրէ մեզ: Հայ գրողը պէտք է գանձ գայն, պէտք է պեղէ գայն ու արուեստի ուժեղ գիծերով ցայտուն դարձնէ եւ համամարդկային բարձրացնէ: Ու այն ատեն է, որ միջազգային գրականութեան հսկաներու քովն ի վեր իր պատւարի տեղը պիտի ունենայ:

Հողը, ժողովուրդը, հայը, ժարդը: Ասոնք են մեր ներշնչման վստահելի աղբիւրները: Իր իմացական ու հոգեկան արժանիքներով, իր տաղանդով հայ գրողները ոչինչով պակաս են միւս քաղաքակիրթ ազգերէն եւ մենք կ'ակնկալենք, որ անոնք տան գրական այնպիսի գոհարներ, որոնք արժանանան միջազգային գնահատանքի ու հայ անունը, հայ հանճարը ծանօթանայ բովանդակ աշխարհի: Արժանանայ յարգանքի ու գնահատանքի: Իմ միակ քաղաքանքս է ասիկա:

Ա. ԱՐՓԻՆԷ

ՅԱՐԴԸ ԳՆՈՒՄ Է, ՑՈՐԵՆՆ Է ՄՆՈՒՄ

Նստած էի եւ մի օր մեր շնմին,
Քեռիս ցորեն էր երնում մեր կալում.
Սարից փչում էր աշուն քով քամին.
Քամին էրում էր ու յարդը առնում:

— Քեռի, — սասցի, — էդ ի մէ իս տնում.
Մեր ամբողջ յարդը տուեցիր քամուն.
— Բամ շկայ, բայիկ, ի՞նչ եւ վշտանում,
Յարդը գնում է, ցորենն է մնում:

Մտնէ բանի մէջ եւ ամէն ժամին
Քամին երնում է ու յարդը առնում,
Մեզ էլ երնում է աշխարհի քամին,
Յարդը գնում է, ցորենն է մնում:

Մե՛նք ոչը աշխարհն ենք երնում լայնից լայս,
Յարդն ու ցորենը տուել ենք քամուն,
Ու եւ յիշում եմ թոսկերը քնառու,
«Յարդը գնում է, ցորենն է մնում»:

Երնում եմ եւ էլ երգերս կիմի,
Իմ ամբողջ կայք բանի կմ քամուն.
Ինչ որ չի մնայ՝ կը սանի քամին,
Յարդը գնում է, ցորենն է մնում:

ԽԱՅԻԿ ԴԱՇՏԻՆՅ

Կան կրիւթ կրկուս արդի արտա-
տաղաներ, ոմանց սակզածը արքան
է ւամհա, որ սառեւրի պէս է շե-
տանում իրենց իրար ընթացքին: Կան
եւ ուրիշներ, անպայման շնորհալի-
բք, որոնք ապրում, շատեր թէ թա-
նուում են իրենց գործի սատարում,
Եւ ինչի Գուշանցը այս շնորհալիբքից
էր: Մինչեւ վերջին օրն էլ եւ ապրեց
եւ մնաց իր գործի սատարում:

Ն. Մ.

Փնտրակաւթեմք է լինում իրա-
բանից իջը երա շնորհալիքն վերջի,
որը ինչ անպարտաւորան արժուիք ա-
մենանշանակի, մշտակոյ արժէքնե-
րից է: Դա մեր ժողովրդական էզանի
լարանակաւթեմքն է, մեր նոր ստաու-
նակաւթ, կերտուած մեծ արտաւազ,
որտի սնունդ իրմութեմք, խոնկա-
վառ սիրով...

Ա. Ի.

«ՀԱՍԱՐԱԿ ՀՈՎՈՒԻԻ» ՏՂՈՒՆ

ՀԱՐՈՒՍՏ ԿՏԱԿԸ

Անցեալ ամառի մին, Սրբուհի մէջ յանկարծմամբ եղաւ Եւզիկ Գուշանց, մէկը երեւ-
նակուն թուականներու շարքին գրակաւթեմք մէջ մուտք գործած ախ սակաւթիւներին,
որ լուսնան մէջ ու լրջութեմք ծառայեց նախասնամանուած կայսրի մը եւ հաւանորտ
չառ սակի սակ պիտի գրուէ արժէքներու նախարակաւթեմք մէջ, զան իր արտիզն զիլ մը
վեր ու զիլ մը վար ազգակոյս զիջերէն շատերը:

Գահաւանս եղաւ մեր կենսալարիին մէջ մնած լեռնական այս հարկին մուշը, բայց
նաեւ անպասեղ լէր: Իր ժողովրդին նախասնամանակաւթեմք սկանտանս մանուկ, ստալինեան
մուսլը հաշակած երիտասարդ, Շէյքսպիրը յաղթահարելու ախտանան ուխտանալին լինում
այլ՝ «Սիրտ կ'ուզէր, որ մարդ սրամ զիմանար», ու յղիմացաւ, սփոս՝:

«Գնաց, — կ'ըսէ Հախտանի մաւարականներէն Արամ Ինճիկեան, — ինչպէս եկել էր՝
մանկան վճիտ հոգիով, պատանկան նրազանճերով, բարի ու անյարք»:



Քննում ու հիմարտութեան ամառապատիւնը ասեալներով հաստատում է, որ իւրազանիւր իրաւ գրող իր գործունէութեան սկիզբը կամ ընթացքին կը ստեղծէ իրաւական, կենդանական կամ աշխարհագրական ծարզերէ անուամ իր խորհրդանիշը: Եր կը խոսցնէ ու ասելի շղարհիւն ու անմէկական կը գարննէ հնթականի գաղափարական աշխարհը: Խաշիկ Գալաննիկի խորհրդանիշը վերի բանաստեղծութեան ճէկը գովերգուամ ճանբութեան է, ջորի՛նը:

Իր ջորի՛նը, անշուշտ, աշխտաս հոգիւրս վրայ սունկցամ տոոց հասկերէ պոսթիւցոզ որտեային անկրկնիկի արժէքով ճը ին ներկայանար ճիւտ, բայց բոյր պարագաներուն արգար ու բարամեծայից ջորին է իր սենկցածը, ասուածը:

Ինչպէս սարէ շտտերու, նաև Գալաննիկի ապիթով Զարնից աստիկնը կդաւ, որ կը սակնից բերուամ ջորինը ևս ինք իմբուցից երիտասարդ բանաստեղծին ճէկը ջորի՛նը՝ Վարնանային երգերը: Պեարտակի պատասխանատուններէն ճէկուն գրուամ ճամակի ճը ճէկը աւա ևս Զարնիցի գորգուրտս վերարբու՛մին ճէկը վկայութիւնը:

Յեծորում ևս անձամբ ևնտեւս, որպէսզի Գալաննիցի գիրքը շնորհեով տպագրուի՝ ճազգիւր տաւաւ, տար տաակի սրսունմ (վերնագիր կայ:ն), — ևնտեւիւր յուսանցեմերին, որ

չափը տեղը լինի: Խաչիկն ստում է, որ զու գիրքը մատուրիկն է, մնում է, որ հետևես յու տղուի: Խաչիկը յու պոետ է, եւ արժանի է, որ Յրա գիրքը յոյս տեսի իմսմեզս:

Ստանդ Դաշտաշէն գիւղին մէջ ծնած ու մեր պատմութեան անկէն փոթորիտի զեզ- քերուս մէջէն սեցած այս գրողը խորութեամբ ապրեցաւ ժամանակաշրջանի սպիտակութեանն ու գոտեւորութեանը, ինչի մատուցող ներստեան իրագործներն ու խորասկզպ պատ- րանաթափութիւնները, որոնց մասնցաւ մասնագիտական փորձառութեամբ ու իրենց շարունակ, մարտադրով կիրքով մը յարգը սուսու գամիին եւ զարդուրաց նարպասին, մարդկայինին, մեծին, պարկեշտին վրայ, ներուար սուսմանները սեցնող արութեամբ մը յաջողելով զերծ մնալ յարգային թեթեւութիւններ կուտակողներու ճառագիտական նշաններէն:

Եւ այս նշաններն էր, որ իրենց մատուցական ստացաւը ստորեայ գամիներու գը- մայրին յանձնած մարդը զրին սակ շատ լինի: Իր սեունը, զուր մնաց գրական բազմա- թիւ մեկտրակներէ, զուրի՛ արգար զնաւաստներէ: Անգրագոտեւելով իր մասին կըստ վե- բապուսութիւններուն, ինքը դիտի ըսէր.

Ոչ մի մեկտրագոտ քնդ չեսկացու,
Ոչ մի բանաստ ըմբանց կողիչ,

Բնագոտներն ու բանաստները, ի նորիկ, ո՛չ թէ շնակցան ու շքմանցին նորին, ոչ չկանկան նաւիկու ու ըմբանի, կամենալու արտաքին պատճառներ շնակցութեան ինք ու ներքին իր պատճառները մղել ու չէին կրնար ըլլալ միտներուն պատճառներուն մէջ, նախաբար դիտի ապրել աշիկու՝ ինչպէս ապրեցաւ, պարտու մոզման՝ սուսուր բրին, ու կեր՛ զուրից զրկուած սակաւի շնակցին:

Շնակցուն պէս չեցաւ, շքմանցաւ շնակցուն պէս, արդէն շատեց արիւտարած էր իր վարքագիծը:

Ձք որոտաւ զու երբեք, ինչպէս շնակցն եւ սնում,
Ձք կրակն աշխարհում ոչ յիշատակ, ոչ սնում,
Նաւ անշնակ ըմբանցի, ինչպէս ետի է ըմբանում,
Նովի բերածը յանախ փոքորիկն էլ չի տանում:

Բանաստեղծ՝ բարութեամբ թաթառու նորիկով, վիզուրի՛ իր մանկութիւնը սրբած ու կազմած Ստանդ Նին ու նոր գիւցապունները պաշտելու անդիմադրելի շնակցութիւն, ու շն- ջրփորեան շնակցութեամբ մարդմանիլ Խաչիկ Դաշտանց ա՛յս սկզբունքով ստալ սարաւ իր ու- խասանը, ազնուութեան, սիրտեղին ու մեծութեան վարչ բացող ա՛յս իմաստութեամբ, նաշունական արտագրութիւններով որոտացողներու բարեբեկ խորշիկով միշտ, յիշատակ ու սնուն մկելու մարմաններէն զերծ, գործը անկէն վեր զտող ստաղիտական նուիրատուու- թեամբ մը:

Դրակտութեան իր նուիրումին, նուսնում մը կատարելու իր կիրքին մասին սքունը- լի են մա՛նական Նէյթփիլին նաշունցած գործերը՝ զտանձինը սպերզուրիւն, կատակը- զուրիւն եւ իրոնիկ՝ յնագրից քարգնախումբ: Յովհ. Ստանկանին ետց, մեր գրողներին ո՛չ ոք Նէյթփիլին մէջ յիշած կրցու միտնուիլ ու Նէյթփիլինով նարտայինի նայ մտկոյ- թը, որքան ըբաւ ստիկա ի՛նքը: Յաղթանաբուսած գործին սուղիներ՝ իտովիլ է յանկուղէն մեծ անդիւստիին էջերուն անմահորէն թափառող ու մեր լեռնախորհը շնակցող ներստեան, ուսման, մզողութիւններուն միջեւ Դաշտանցի զգացած, ապրած զուգանականութիւնը, սա իտուտովանութիւնը:

Ենթէ իմն հարցնեն, թէ Նէյթփիլի քարգնախումբն եւ սմէնից շատ ինչի՞ մասին եւ մտածում, եւ անկեղծօրէն կ'տեսնմ՝ իմ ծննդավայրի մասին, Ստանդն եւ նաշունցած Ցաւ-

բազի մասին, այն երկրի մասին, որանգ ապրել են իմ պապերը, մեր ամբողջ ծագավորազը Քաթմանայ քրից մինչև Անիի անբավանքը: Շէյխֆիր քարգմանելու գծուարութիւնները չեն, որ ամբուս են ինձ, այլ իմ բանագրուած ծննդավայրի մարմա՛քը: Շէյխֆիրի անբարան երկրները եւ նրա սանգածան կերպարները ինձ շարունակ յիշեցնում են իմ հետաւոր երկիրը եւ Յրա պատմական ներոններին:

Պատմութեան շէյխֆիրը գիտերու աէր եւ անշուշտ ընթացներու հանգէպ շէյքորան հոգիւմ ճը սենեցող Պաշիկ Դաշանց, որ կը խորշէր դաստիարակունչ որոտացողներու անմիտ ելոյթներէն, սասնէն սրէն կազուեցաւ որոտընդուտ երկու վիթխարիներու, Ձարենցին ու Շէյխֆիրին եւ անվարձ շմայց: Մանթէ է Պարենցի համարումը: Վարձատրուեցաւ ետեւ երեսուն տարիներու վրայ երկարան շէյքֆիրեան իր աշխատանքը: Գիրական ընթացքի Յունուար Շէյխֆիր համարին ճէլ, շեայիկ Դաշանցը Շէյխֆիրեան ընկերութեան անդամը խորագրին ապէ հաւորուած ու լուրով:

Գլայմարից (ՊԻՆ) ասացուած նամակը ծանուցում է, որ գրող, Շէյխֆիրի երկիրի յայտնի քարգմանիչ, Հայաստանի գիտութիւնների ակադեմիայի արուեստի ինստիտուտին կից գործող Հայկական շէյխֆիրագիտութեան կերթոնի աշխատակից Խաչիկ Դաշանցը ընտրուել է ՊԻՆ Շէյխֆիրեան ընկերութեան անդամ:

Այս վարձարութեան ընդամենը բառասան որ ետք յանկարծա՛տ եղաւ Դաշանց, անուարաւ ձգելով սանգնագործական ու Պարզամշական բազում նրագրներ:

Իրագործուածը թիչ չէ սակայն, — քանզի ճը որոտյալ բանասերը թիւններ, դաստիարական մեր Հայրենիքին ճէկ ժառը եւ անոր ողնկրնայած զէճքը ողնկրնայ զէկ ճը՝ շեայիկան, Հայրենիք բազմաթիւ վերածումներ Լոնկֆելտին, հոգար Այն Փայն, Մարոյեաննէն, ուրիշներէ, սասնեմարտ մեծաւանդ ուղիղացիէն: Այս է իւրեքից ճասարակ հազուին որդու ճասարակին հիմնական ժառը, որ պարտական իր նրքին յազերով, քոթորիկներով ու քորակուական իմաստութեամբ երախտուտաւ տարումներ պիտի յազէ Հայ դրակուութեան քոթորիկ ճասարակը բուր մարդոց սրանուս, այսօր եւ վաղը:

Հետագայ կէտուն՝ ընթերցողին կը ներկայացնենք ոչտոտայ զրոյին լրուութեան, ճը-աստարական պարկէլուութեան, երկունքին ու երկնելու եզանտներուն ժառին վկայող արեւանկէն էլ ճը՝ շեայիկանց շէյխֆիրեան քարգմանութիւնների վրայ:

Բնագիտի յաջող համարով պիտի ներկայացնենք Ձարենցին եւ իրան Դաշանցի քորթուածը եւ ճեւղարտութիւններ Յիշէլ Ձարենցի մասին անուս իր ճէկ դրութեանը, ընկերացնելով անուց մեր կողմէ խորագրուած շարք ճը կցողը խնդիրներ...

Խ. Դ Ա Շ Տ Ե Ն Ց

Ի Մ Ա Յ Խ Ա Տ Ա Ն Ք Ը Ձ Ե Յ Ք Ս Փ Ի Ր Ե Ա Ն Ի Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ի Վ Ր Ա Յ

1920 թուի Հոկտեմբերին, երբ Կարաբեղիբի զորքերը մասն շարք, եւ որքանոցումն էի եւ սովորում էի երբորգ զստարանում: Մի անգամ Ղարաի ձորով անցնելիս մտայ մի աւերում չայկական գրախանութ: Հայ գրողների գրուածքներին հետ զհանին ատարածում էին Շէյքսպիրի Հայերէն առաջին թարգմանութիւնները՝ սուփնահար եւ Հրկիզում. այնանգ էին Վարդայ Լիքալ, Վալմիլեքալ, ՎՄակրեքալ, Վեռնիս եւ ձուլիլեքալ, Մովսէս Թորնեցու Վալայոց պատմութեան կողքին վերաւոր անքում էր Վեհնետիկի մարտը: Բարբաբոսի սուփնա խոցել էր մի վիթխարի ճակատ, որի առկ Հայերէն առաւելով գրուած էր Վեհնետիկ Շէյքսպիրը:

Այդ եղաւ իմ առաջին Հանդիպումը Շէյքսպիրի հետ: Երկրորդ անգամ Շէյքսպիրին Հանդիպելի Լենինականի Գոլիկոնի գրադարանում՝ 1925ին: Ամերիկայից անդիբրէն զբեւր էին ստացուել. մէկի վրայ Հեզելով կարգաչի Վեռնիս Կեսարը:

Տասերչորս տարի անց, Մոսկուայի սասր լիզուներէ ինստիտուտի Հանրակացարանում նստած՝ եւ սկսեցի թարգմանել Հենց այդ ողբերգութիւնը՝ Վեռնիս Կեսարը: Ինձ ողբերգում էին Բրուստոսի եւ Անտոնիոսի ճառերը: Մի անգամ մշակեցի իմ թարգմանութիւնը, աշխատելով որքան կարելի է հարազատ մնալ բնաղբին: Շէյքսպիրից կատարած իմ անդրանիկ թարգմանութիւնը լոյս տեսաւ Երևանում՝ 1944ին:

Արդէն քսաներկնգ տարի է, որ եւ իմ գրական աշխատանքին զուգընթաց աշխատում եմ Շէյքսպիրի թարգմանութիւնների վրայ: Իմ թարգմանութեանը մինչեւ այսօր լոյս են տեսել վեց կոմետիս եւ եօթ ողբերգութիւն:

Վերջերս աւարտեցի Վերիսիսայի թարգմանութիւնը:

Հիմա թարգմանում եմ Վեռնիսիս Երկրորդը:

Իմ թարգմանական սկզբունքն այս է. առանձին անյախոջ նախադասութիւնները չեն, որ սրտում են թարգմանութեան որակը: Թարգմանութեան մէջ կարեւորը շունչն է, այն ախներ, որով թարգմանում է տունալ գրուածքը:

Ամենայաւն այն է, եթէ մենք թարգմանում երկր Համեմատենք անտառի հետ: Ինչպէս որ վոթորիկից տապալում մի քանի ծառ չեն կարող աղղել անտառի զեղեցկութեան վրայ, թէեւ տեղ-տեղ կարող են դժուարացրնել անցումը, այնպէս էլ գրքում տապալում մի քանի նախադասութիւն չեն կարող նսեմացնել լաւ թարգմանութեան Հմայքը, թէեւ ընթերցողը կարող է սայթաքել դրանց դիպելիս:

Ասել թէ լաւ թարգմանութիւնը միայն բժախներ աշխատանքի արդիւնք է՝ ճիշդ չի լինի, որովհետեւ կան շատ բժախներ գրողներ եւ բժախներ թարգմանիչներ, որոնք ստեղծում են անտառը, ուր բոլոր ծառերը

կանգնած են իրենց տեղում, նոյնիսկ կուտրուած ճիւղեր չկան, բայց անտա-
ռը բոյր չունի, աշխտել կենդանութիւն չկայ, տերեւները չեն սօսափում,
հաւքերը լաւ են:

Ուրեմն, ինչպէս Յովհ. Քումանեանն է ասում, «...լեզուի յաղաղ փո-
խառութիւնն ու ճիշդ քարգմանութիւնը մեծապէս տաղանդի ու շնորհքի
գործ են դառնում»: Եւ բանաստեղծը հակացող ու կիրթ ճաշակի տէր մարդ-
կանց խորհուրդ է առիւս շխտելիս թէ գրելիս, փոխառնելիս թէ քարգմա-
նելիս զգոյշ լինել ու բարեխիղճ, որովհետեւ ամէն մի ինչիւն, ամէն մի բան,
ամէն մի ձեւ կամ ոճ մի մեծ ստեղծագործութիւն է ու մի ամբողջ աշ-
խարհէ» (*):

Ես իմ Քարգմանութեան ժամանակ միշտ հետեւել եմ այս սկզբունքին:
Ես նոյնպէս կիրառում եմ համբը եւ կարող եմ սանել, որ այդ չափը կարծես
ստեղծուած է Եւլյքսփիրին հայերէն Քարգմանելու համար:

Ինձ համար, իբր բանաստեղծի, ոչ մի դժուարութիւն չի ներկայացը-
նում Եւլյքսփիրի չափածոյի Քարգմանութիւնը, եթէ իմաստը հասկանալի է:
Երբեմն պատահում է, որ նրա արձակի որոշ մասերը աւելի դանդաղ են
Քարգմանում, քան թէ չափածոն:

Այդ արձակը, որ մէջընդմէջ յաջորդում է չափածոյին, երբեմն նօսը,
կամ երբեմն էլ շատ թանձր շերտով չափածոյի պէս մի բան է, մի անսակ
արձակ բանաստեղծութիւն: Հեղինակը սովորաբար չափածոյի է գիժում երբ
զո՞՞ւրաբին» կամ «խորտուերբա» տեղեր կան անցնելու: Ինչպէս որ լեռնա-
լանջով կամ արձակ գաշտով քառատրոփ վազող նժուղը յանկարծակի մտնում
է մի լեռնանցքի մէջ, կամ հարկադրուած է դնալ նեղ ու քարքարոտ ճանա-
պարհով եւ ստիպուած է դանդաղեցնել իւր քայլերը, որոնց մէջ երկար ժա-
մանակ դդացում է քառատրոփ վազքի ութժժը, այդպէս էլ Եւլյքսփիրը չա-
փածոյից արձակի անցնելով չի կարողանում անմիջապէս զուգել իւր ութժժա-
կան վազքը: Նա իր արձակ խօսքի մէջ երկար ժամանակ դալ է առիւս բա-
նաստեղծական շեշտը եւ նրա աստիճանաբար անհասացող ներքին ութժժը,
որը հետզհետէ ուժեղանալով փոխում է չափածոյի եւ միաւորը նեղ, քար-
քարոտ տեղերը անցնելով, վերադառնում է լայնարձակ գաշտերում՝
քառատրոփ վազքի համար: Այդ է պատճառը, որ մի շարք հրատարակու-
թիւններում հեղինակի որոշ սողերը համարակալուել են իբրեւ բանաստեղ-
ծութիւն, իսկ ամանք այդ միեւնոյն սողերը վերագրել են նրա արձակ մասին:

Չնայած դժուարութիւններին, մենք սիրով ենք Քարգմանում Եւլյքս-
փիրին, մի հեղինակ, որի ծնունդը եւ գոյութիւնը քննադատները համեմա-
տել են բնութեան երկրորդ ստեղծագործութեան հետ:

Իմ Քարգմանութիւնները եւ բարձրաձայն կարդում եմ մի քանի ան-
գամ, տող առ տող, պարբերութիւն առ պարբերութիւն: Եթէ ինձ չի գոհա-
ցրնում, ջնջում եմ եւ նորից եմ Քարգմանում: Մակդիրները յուզական ջեր-
մութիւն են հաղորդում տողին, ինչպէ՞ս կարելի է դրանց կողքով անտար-
բերութեամբ անցնել: Ես բնականորէն հետեւում եմ ամէն բանի ու
նոյնիսկ նշիւնի ներդրական ուժին բնազդի տուեալ նախադասութեան մէջ,
աշխատելով գտնել իւրաքանչիւր բանի կամ մակդիրի լրիւ համարժէքը մա-
րննի լեզուի մէջ, որովհետեւ ինչպէս Եւլյքսփիրին է ասում, «Երանք, ովքիդ
թիթուամտութեամբ եմ խաղում քառերի հետ, հեշտութեամբ կարող եմ նը-
րանց իսկական իմաստը փոխել»:

(*) Յ. Քումանեան, Երկերի ժողովածու, հատոր IV, 1951, էջ 375:

Եւ թարգմանում եմ արգի հայերէնով, օգտագործելով ժեր Հին եւ Նոր լեզուի հարուստ բառապաշարը: Ի դէպ է սակ, որ իմ օգտագործած անգլո-հայ բառարաններից մէկը հրատարակուել է 1821 թուին Վենետիկում: Այդ բառարանը կազմել է Պայրրնի հայոց լեզուի ուսուցիչ Յարութիւն Ազիերեանը, եւ այդ գործին մասնակցել է նաեւ Պայրրը: Դա մի գործանալի ճոխ բառարան է եւ, ի բախտաւորութիւն ինձ, պարունակում է չէյքսփիրեան անգլերէնի գրիթէ ամբողջ բառամթերքը հայերէն բացատրութեամբ եւ Հոմանիշների ընդարձակ ցանկով:

Ես ուշադրութիւն եմ դարձնում, որ թարգմանութիւնը ո՛չ միայն Հարազատ լինի ընդգրին, այլեւ լաւ հնչի հայերէն, ոտանուորք ստեղծ կարգացուի, զգացունեն նաեւ չէյքսփիրեան արձակի ներքին ուրիշները: Ես բնագրի մոգովրդական զարձուածքների եւ ունիթի Համար երբեմն օգտագործում եմ Հայկական մոգովրդական որոշ ոճեր ու զարձուածքներ: Շէյքսփիրի որոշ անուններին եւ տեղանուններին Հայկական երանց եմ տալիս, մի զիչ տեղադրեցնում եմ: Կարծում եմ, որ ես ճիշդ եմ վարուում, որովհետեւ այդ թեթեւակի, աննշան երանքը ո՛չ միայն մեղմացնում է այդ անունների խորթութիւնը եւ հղովական դժուարութիւնները (մանուսնդ լափանոյ թարգմանութեան մէջ), այլեւ տեքստը իր բոլոր յատկանիշներով հարազատ է գարձնում հայ ընթերցողի սրտին:

Ինձնից (ինչպէս եւ միւս թարգմանիչներից անուշաւ) շատ ժամանակ են խլում տեքստային դժուարութիւններ յաղթահարելը (կենտոս դարձուածքներ, փոխարեքական տրոսայտութիւններ, զուտ տնայիական ոճեր, եւ այլն): Գրասեղանի առաջ նստած ոգևորուած թարգմանում ես եւ յանկարծ գրիչդ դէմ է անոնում մի մեծ խութի: Երբեմն այդ խութը տեղից հանելը ոչ թէ ժամեր, այլ օրեր եւ նոյնիսկ շաբաթներ է խլում: Դիմում ես չէյքսփիրեան բառարաններին, թերթում եւ դիցարանական եւ կրօնական մատենաները, օգնութեան եւ կանչում ոտու եւ օտարազգի տարբեր թարգմանիչներին, մինչեւ վերջապէս յաջողուում է դժուարութիւնը յաղթահարել:

Մական լինում են այսպէս ասած զգուսանան տողեր, երբ իմաստը պարզ է, բայց տողը չի ստացում, բռտերը չեն նստում իրենց տեղը: Մի քանի տարբերակ եւ անում՝ դարձեալ չո սրտով չի. մի տեղ պատկերը չի ստացում, մի այլ տեղ տողի յուզական լունչն է պակաս, մի ուրիշ տեղում հոմանիշն է անյաջող ընարուած, կամ տեսնում ես, որտեղից որտեղ, տողի ամբողջ երկարութեամբ, ձգուել է աշխարհագրական մի երկար անուն (կամ չորձող անձի անուն), նեղացնելով նախադասութեան միւս անդամների տեղը, շատերին էլ զլորելով ներքեւ: Աղմուկ է բարձրանում: Այդ ժամանակ է, որ դու գրիչը ցած դնելով յուզուած շրջում ես սեննակում, մտադրաղ նայում ես պատուհանից դուրս եւ յանկարծ փայլատակում է միտքդ, տողը կառուցուում է աչքերիդ առաջ, եւ դու գրասեղանի մօտ վազելով լոնցնում ես նրանց ազմուկը, ամէն մէկին նստեցնելով իր տեղը: Եւ գրանից թէ՛ Շէյքսփիրին է գո՛հ մնում, թէ՛ դու եւ թէ՛ չո ընթերցողը:

Ինձ հետ այդպիսի պահեր շատ են եղել, բայց գրանք եղել են նաեւ երջանիկ պահեր, որովհետեւ իմ զրուցակիցը եղել է Շէյքսփիրը:

Իմ թարգմանութիւնների մէջ էլ կան տապալուած ծառեր, որոնք դժուարացնում են անցումը եւ դուցէ՛ դրանք շատ են, բայց ես աշխատում եմ, որ իմ անտառը շնչի ամբողջ գեղեցկութեամբ ու բոյրով:

Վերևում առաջի, որ դժուարութիւնները զգալքում են դիմում եմ նաև ուսուցանող թարգմանութիւններին: Ամբողջ աշխարհին յայտնի են Մարշալի, Պատերնակի, Լոդինսկու եւ այլոց Շէյքսպիրից կատարած սքանչելի թարգմանութիւնները: Սակայն որքան էլ թարգմանիչը ինքնատիպ լինի եւ հնդկնակաւոր, այնուամենայնիւ, թոյլատրելի չէ քառանկարէն վարուել Շէյքսպիրի հետ: Հիւկոն բողոքում էր, չլինի թէ սեւէ թարգմանիչ Համարձակուի որեւէ բառ պակասեցնել կամ աւելացնել Շէյքսպիրի տեքստին: Բայց ո՞նչ Պատերնակը շատ քառանկ է վարում քնազրի հետ: Նա պէն է նեւուսում ամբողջական սողիք, աշխարհագրական եւ դիցարանական մի շարք անուններ, առանձին երկրների անուններ...

Ինքս խստորէն զէմ եմ լուսանկարութեանը՝ թարգմանութեան մէջ, բայց մի թէ Շէյքսպիրի տեքստերից պատմական երկրների աշխարհագրական եւ դիցարանական անունները դուրս նետելը, հեղինակի պատկերաւոր բոսքը մի սովորական խօսքով արտայայտելը, կամ ամբողջական սողեր դուրս թողնելը լուսանկարչական ժանրուք է:

Սօ անձամբ շատ բարձր եմ գնահատում ոուս թարգմանիչներին: Յատուկ յարգանք ունեմ ոուս նշանաւոր շէյքսպիրագէտներին՝ Դինամովի, Մ. Մորոզովի, Ա. Մմիրնովի եւ իմ սիրելի դասախօս Ալեքսանդր Անիկոտի նրկատմար, որոնք վերջին մի քանի տասնամեակում հսկայական ներդրում են կատարել շէյքսպիրագիտութեան մէջ:

Ես ուզում եմ, որ Շէյքսպիրի սովետական շրջանի թարգմանութիւնները մի քանի զլխով բարձր լինեն նախասովետական շրջանի թարգմանութիւններից, իրենա Համահնչուն լինեն քնազրին: Մենք, հայերս, ունենք բընազրից թարգմանելու մեր ԼՍՊՊ տարուայ դասական թարգմանութեան ոււււււււները եւ բնթանում ենք այդ ճանապարհով: Մեր կորստական մի քանի ժողովուրդները, ինչպէս, օրինակ, վրացիները, ուկրայնացիները եւ հասոնացիները նոյնպէս քնազրից են թարգմանում: Սակայն կան ժողովուրդներ, որոնք քատրեր յունենալու պատճառով Շէյքսպիրին թարգմանում են ուսսերկնից: Անա թէ ինչու ոուս սովետական թարգմանիչները դերն ու պատասխանատուութիւնը աւելի է մեծանում: Նրանք պէտք է աշխատեն, որքան կարելի է, հարազատ մնալ քնազրին, որովհետեւ թարգմանութիւնից թարգմանուելու զգալքում քնազրի Համեմատութեամբ կորուստը զանոնում է կրկնակի:

Միպուսէ ինձ չի վերապահում, բայց Համարձակում եմ սանել, որ ուսանաւորի այն չափը, որ մինչեւ այժմ կիրառուած է ոուս թարգմանիչների կողմից՝ Շէյքսպիրի չափածոյի Համար, իմ կարծիքով, բաւական նեղ չափ է: Արդեօք Հնարաւոր չէ՞ մի նոր չափ որդեգրել, ինչպէս արեց այդ Յովհաննէս Մասեհեանը՝ կոտրելով հայկական թարգմանութեան տալաւափական հին տրագիդիան եւ Շէյքսպիրի մտքերը զննելով աւելի տարածուն սողերի մէջ:

Մեր աչքի առաջ կատարում է մի շատ հետաքրքիր երևոյթ: Շէյքսպիրի երկերը հնչելով ժամանակակից լեզուներով, նրանց ներդրութեան ուժը զանոնում է աւելի զօրեղ (իմ խօսքը անշուշտ յաջող թարգմանութիւնների մասին է): Նոր սերունդները անհամեմատ բախտաւոր են, որ Շէյքսպիրին կարդում են իրենց մայրենի լեզուով, մինչդեռ իրենք անգլիացիները նրան կարդում են մի արդէն բաւական Հնացած լեզուով, որ թէեւ Շէյքսպիր-

փրկին է, բայց զժուարժամարս է տնդլիախու նոր սերունդներէ համար: Եւ արդէն ձայներ են լուսւած այն մասին, որ անդլիացիները Շէյքսփիրին թարգմանեն արգի անդլիէնով, այդ տղամանդի վրայից զգուշութեամբ թափ տալով այն լեզուական փոշին, որ մօտ 400 ասորուայ նստուածք է տուել: Բայց արդեօք զա նստուա ր է:

Շէյքսփիրին թարգմանելը ներկուլիսեան աշխատանք է, բայց եւ որքան մեծ բուսականութիւն է զգուծ թարգմանելը այդ աշխատանքի մէջ:

Մասնահանր իր դիւանագրական մեծ աշխատանքի համար արժանացել էր «խան» տիտղոսին: Կայ նրա մի յայտնի լուսանկարը, պարսկական լ'ազոր դասական փայլուն համազգեստով, կուրծքը շքանշաններով գարգալուած: Բայց այդ եռանդուն գործիչը մեռաւ Պարսինի նիւանդանոցում մենակ, առանց ոեւէ մէկի ներկայութեան: Աւելին. Քոքիոյի Ֆրանսիական նիւստատու որչում է Մասնահանրին հողին յանձնել մահմեական ծէսով, կարծելով թէ նա մահմեական է, որովհետեւ նրա անձնագրում զրուած էր «H. K. Mossahed»: Այսպիսով, Մասնահանրի սխան տիտղոսը պղպղակի պէս ջնդէց՝ դիպչելով «Համլէթ»ի սուտերի ծայրին:

Եւ նա այժմ Հայաստանում եւ Հայաստանից դուրս յայտնի է իբրեւ Շէյքսփիրի երկերի փայլուն թարգմանիչ, եւ ոչ թէ իբրեւ Իրանի Շաւի լիազոր դեսպան Պերլինում, Լոնտոնում եւ Քոքիոյում:

Եւ Շաւի ոսկերչագետի գաւակ չեմ. մի հասարակ հովուի որդի եմ, ծնուած Սասունում, Հայկական Տաւրոսի լանջերին (Արեւմտեան Հայաստան): Ոչ մի տիտղոս չունեմ, դիւանագէտ էլ չեմ եղել, բայց ահա քսանընից ասորաց աւելի է, որ Շէյքսփիր եմ թարգմանում, շարունակելով Մասնահանրի եւ մեր միւս երթաւոր թարգմանիչների անաւարտ գործը: Եւ դա ինձ համար մեծ պատիւ է:

Եթէ ինձ հարցնեն, թէ Շէյքսփիրը թարգմանելու ես ամէնից շատ ինչի մասին եմ մտածում, ես անկեղծօրէն կ'սսեմ՝ իմ ծննդավայրի մասին, Մասունի եւ Հայկական Տաւրոսի մասին, այն երկրի մասին, որտեղ այրի է են իմ պապերը, մեր ամբողջ ժողովուրդը Պաթմանա լրից մինչեւ Անիի տներակները: Շէյքսփիր թարգմանելու զժուարժութիւնները չեն, որ աւանջում են ինձ, այլ իմ բունագրուած ծննդավայրի մորժօքը: Շէյքսփիրի նկարագրած երկրները եւ նրա ստեղծած կերպարները ինձ շարունակ յիշեցնում են իմ հոռու երկիրը եւ նրա պատմական ներոտներին:

Կարող եմ ասել, որ այդ փոթորկաշունչ անդլիացին մեր ժողովրդին աւելի է օգնել, քան թէ նոյն կղզու ոեւէ պետական գործիչ, ներառեալ նաեւ Կլաուսթոնը: Շէյքսփիրի գրուածքները միշտ եղել են մեր ժողովրդի անբաժան ուղեկիցները, նրանք խնդացել եւ լացել են մեր ժողովրդի հետ: Մօտ 150 տարի է, որ նրանք փոթորկում են մեր բեմերը, մեր սիրտը, մեր հողին:

«Պատմառ ուննք հաւատալու, — ասել է Մասնահանր Լոնտոնում 1916 թուին Շէյքսփիրի մահուան 300ամեակին նուիրուած հանդիսաւոր նիւստում, — որ Շէյքսփիրը երեք դար երթապական աշխարհը տիրապետելուց յետոյ, յաջարդ դարին իր համեմարի կնիքն է դրոշմելու Արեւելի մտածելակերպի վրայ, քանզի Շէյքսփիրը մի շրջանի համար չի գրել, այլ բոլոր ժամանակների, կամ իր խօսքով ասած՝ «զեւ շնուած ժողովուրդների եւ լյայտնուած լեզուների համար»:

ԽԱՋԻԿ ԴԱՇՏԵՆՑ



Ի Մ Ո Ւ Ղ Ի Ն

Հպարտ ամաց իմ ուզիմ,
Քեր շարժերին խորացած,
Պաշտամունքի խորանին
Ոչ մի պատրոյց չվառած:

Երէ որոշ տեղերում
Մի էի տա՛ մարդ է ծորիլ,
Այդ էլ ես չեմ մեղաւոր,
Խմբագիրներն են տրել:

Ու զնու՛մ եմ այն օրից,
Ոտե՛ս ամուր, մեր հօգի՛ն-
ձու նուկասս արի՛մասս,
Եւ հայեացքը իմ ուղիղ:

Դ՛մ քիկունքին ես չունեմ
Վնասաւանքի պտեղազան,
Անողմուկ է իմ կեանքը,
Անտվոր է իմ հօտքան:

Տարիներով լաւե՛մ եմ՝
Երբեմն յազուած ու տխուր,
Զեմ շտապում ամէն տեղ,
Ու չեմ բախում ամէն գուռ:

Փայք չէ, կ'երբ-տա՛մ ես առաջ
Վապուած իմ մեծ մայր հօգին,
Փամզի այդ է Քշմարիս
Բանաստեղծի սուրբ ուղին:

Խ. ԳԱՇՏՆՆՑ

«Ե՛մ ուզի՛ն» անուն այս ստանաւորը ստեղծա-
գործութեան հետ շատ ազերս շունենալով հան-
գերձ՝ ճշգրտօրէն կը պատկերացնէ այն դժգոհ
կացութիւնը, որ փորձաւոր մը եղաւ հայն ստեղծ
ու երեւան բերաւ մէկ կողմէն յարմարակաւ
խառնուածքներով պաշտամունքի սեղանին: Մե-
ծողմուկ ծիսակատարութիւններ կատարած հագ-
կասակները, եւ միւս կողմէ՛ իրենց կոչումին
անազմուկ ծառայած վշտահար հաւատարիմները:

Ստանաւորին լոյս տեսած օրերուն, անարտա
գրութիւններու մէջ պայմանակետօրէն ստալինեան
ճարպիք հասցնող «Ստալինի ծառայողները»
այն աստիճան էրբմնացին, որ ամբողջ տուած
«Մովսէսեան գրականութիւն» ամսագրին գլխաւոր
խմբագիրը, Ստ. Կուրսիկեան, պաշտօնակաւ ժո-
ղովի մը մէջ ստիպուեցաւ յայտարարել, որ

*«Մտազգայնութիւնը սխալ է արել՝ ապագայով
հաշիկ Գաշտեանի շինութեան թանկանշարձութիւ-
նը: Այն ուղիով չէ ստեղծ անհատ պաշտա-
մունքի վստահար հետեւանքներէ վերացմանը,
չի պետք այն պայքարին, որ պարտեմ էղում է
մեր կեանքի լինելու հարմարութիւնը մինչեւ վերջ
վերակենդանու ճամբը»:*

Իրազէ՛ս սխալ քրտ էր խմբագրութիւնը,
քէ ճիշդ վարուած ըլլալուն համար ստիպեցին
խմբագրին դիմել հրատարակչին ինքնախարա-
զանմամ:

Ստալինեան դաժանութիւնները նկարագրելու
համար գրողներուն տրուած ազատութեան պըզ-
տիկ շքեանին, իշխանութիւնները ստրակալի
կացութեան մը ազեւ զգացին իրենք՝ զիրենք,
տեղում, որ յամուկ հատմանովարութեան կատար-
ւած անհաշիւ սերներուն պատկերացումը լըբ-
ջօրէն կը վտանգէ իրենց հեռակարային գեորգ-
ները եւ ամմիշապէս վերական սեղաններուն,
առտեղանաւոր յանգելով ստալինեան քրտա-
թիւնները կիրարկելու ամօթին:

Խաշիկ Գաշտեանի շտանաւորին եւ քայն եր-
բնկալած խմբագրին դէմ արժանուած աստուգ
կը քաջատրուի հազիւ համգած ստալինեան ու-
զիին այդ վերածնունդով:

Պարագայակաւ իր երեւանիւն աւելի՛ շտեղ-
կան է սակայն շտանաւորին միւս կողմը, այն
գիծը, որ չշտապելու, ամէն գուռ չգտնելու, հո-
վամարողներ չփնտելու պայմաններով կը նշէ
«Թանկանշարձ սուրբ ուզի՛ն»:

Գ Ի Պ Ա Շ Ա Ր (Ս Ի Ի Ժ Է)



«Բաղիւնօի ներկայ համարին մէջ, Սերգէյ Փարսճանօյի «Նոսալ զոյն»-ը անուն ժայռաւանդի մասին «Գարուն»ի յօդուածներէն արտադրած մեր հատուածները իրենց խելացի բնոյթով անպայման որ հաճոյք պատճառեցին ընթերցողին: Նորին, տնակնկալին, անյայտին յայտնագործութեամբ խանդավառ ոգի մը կ'իջի մտնոց մէջ ու ասիկա միթարական է սոցիալ-լիտական իրապաշտութիւնը կոշտած կարգախօսով իմացական երեսոյթները գնահատող խորհրդային սոցիալիստականութիւններուն դիմաց:

Դժբախտաբար, նոյն համեմատութեամբ չենք կրնար ողբերգութիւն յօդուածագիրներուն գործածած լեզուին առնչութեամբ: Ընթերցողը կը տառապի ի՛ մանաւորի օտար բառերու անհարկի առատութենէն: Օտար բառերով խճողուած ու ծանրաբեռնուած է մանաւանդ Պրոնիպէ Դոմիտրիեւի գրութիւնը: Այս վերջինէն մեր արտադրած ընդամէնը մէկուկէս սիւնակին վրայ կը սխալուած մէկուկէս տասնհակ օտար բառեր, որոնց սոյր երբե՛ք չէ զգացած մեր լեզուն: Պակա ս գեղեցիկ կ'ըլլար արդեօք Դոմիտրիեւի յօդուածը ու «Գարուն»ի ընթերցողները չէ՛ին հասկնար հոն յայտնուած մտածումները, էթէ, օրինակ, իր գրին տակ «պոետը»՝ քանտոսեղծ ըլլար, «պոյեմիկական»՝ հրապարակախօսական, «տեխնիկ»՝ քննադատիչ, «պրոցես»՝ հօլովոյթ, «տրանսկրիպտական»՝ գործարան, «քրիթիկական»՝ ստուտուածայնական, «կոնկրետացում»՝ առարկայացում, եւ այլն:

Վաթսունական թուականներուն, օտար բառերու անհարկի գործածութեան դէմ Գեղամ Սարեանի սկսած, Պարոյր Անակի օժեպացուցած, Ռաֆայէլ Իշխանեանի, Բաղդէ Յոյսէփեանի, Վարդ Աւագիւնի եւ կարգ մը ուրիշ մտաւորականներու մղած պայքարը բարեբար անդրադարձ մը ունեցաւ այդ մարդին վրայ, բայց որովհետեւ գործը լրիւ չէ պսակուած տակալին, նախանձախնդիրներէն ոմանք լուռ կամ բարձրաձայն եղանակներով կը շարունակեն ոչ ոքի չվնասող ու միայն բարիք բերող մաքրագումարի ազնիւ ճիգը:

«Գարուն»ի յօդուածագիրները հակադրաբար յիշեցուցին մեզի մեր լեզուն մաքրութեան համար առաջին գիծի վրայ պայքարող վերոյիշեալ մասւորականներէն Ռաֆայէլ Իշխանեանը, Իշխանեանէն կարգացած մեր վերջին յօդուածը, «Սովետական գրականութիւն» ամսագրի անցեալ տարւան Նոյնմբերի թիւին մէջ, խորագրիբ՝ «Փաստականի եւ գեղարուեստականի սահմանագծում»:

Մանրատու տասնմէկ էջերէ կը բաղկանայ այդ յօդուածը, որուն մէջ միայն մէկ հատիկ օտար բառ կայ, այն ալ փակագծի մէջ, անոր համարժէք հայերէնը գործածելու լռելիայն հրաւերը ընդգծելու համար, հետեւեալ ձևով.

«Գարբիլիմ հմուտ քրօնք Աւի դարձնելը, ինչպէս կը տեսնէ՛ք, կարելու է եղել պատմութեան դիպաշարը (օրիժէ) կառուցելու եւ մտայնացումն արտայայտելու տեսակետից»:

Պարզապէս հիանալի է հայացնող այս ոգին: Դաս մը՝ մեր յօդուածագիրներուն ու խմբագիրներուն: Ամէն'ւա...

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ՀԻՆ ԿԱՐՕՏՆԵՐՈՒ ՀԱՄԲՈՎ (Ցուշագրութիւն - ուղեգրութիւն), Ե. Ն.
Փնւտ, Նիւ Ճըրզի, 1973

ՀՐԱՇԱԼԻ ԶՕՐՈՒԹԻՒՆ (Քանաստեղծութիւններ), Գալուտ Խաննց,
Թեհրան, 1972

●

Տեղի անձեւքեան պատճառով յաջորդ թիւով պիտի ներկայացնենք
այս համարին համար պատրաստուած շարք մը գրախօսականներ ու նշմարներ :

●

ՏԱՐԻԿԱՆ ԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼԻՔՐԱՆ 40 Լ. ՈՍԿԻ
ՈՐՏՈՍԱԿԱՆՆԵՐ 20 ՏՈՒՆԸ
ՀԱՏԱՎԱԾԱՌ 4 Լ. ՈՍԿԻ

پاكين
مجلة شهرية ، ادبية وفنية علمية
مدير المسؤول
السيد ارتين كارنيك قزائجيان

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

Բ Ա Գ Ի Ն
ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԹԵԱՑԻ

ՀԱՐԻՑ ԻՄՍԱԳԻՐ
Կ. ՍԱՍՈՒՆԻ
ԻՄՍԱԳԻՐ
Պ. ՍԵՆՏԵԱՆ

Հեռագրային՝ 296898

Վարչութեան հասցէ

K. ARARADIAN
Rue Selim Boustani
Beyrouth - Liban